

ՄԱՐԶԻԿ

հսլս

مارزقك

مخلة رياضية شهيرة
تصدرها جمعية الهومنتمن بيروت

marzig

SPORTS MAGAZINE

3109 ՏԱՐԻ. 2012, ԹԻԻ 8 (362) - VOL. XXXI N° 8 السنة الحادية والثلاثين - العدد الثامن



ԿԱՄՔ ՄԱՐՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ ԵՒ ՀԱՅ ՀԵՏԱԶՕՏԻԶՆԵՐՈՒ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

100

YEARS - ՏԱՐԻ
1912 - 2012




GAMK Sports Club and Boy Scouts Assn. Alexandria 1912

Homenetmen-GAMK Alexandria 2012

Հ.Ս.Ը.Մ. - ԿԱՄՔ ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ



Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱԼԷՊԻ ՔՈՅՐԵՐՆ ՈՒ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ ԱԶԳՕԳՈՒՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒ ՊԱՏՆԷՇԻՆ ՎՐԱՅ

Րաֆֆի Սիլահեան
ՀԱԼԷՊ

Սուրիոյ ծանօթ դէպքերը տագնապալի վիճակի մատնեցին հարիւրաւոր ընտանիքներ, որոնց զաւակները, հարազատներն ու բարեկամները մահացան կամ վիրաւորւեցան ահաբեկչական անարգ գործողութիւններով, ռմբակոծումներով եւ արձակազէններու կոյր փամփուշտներով:

Դէպքերուն թիրախ դարձաւ յատկապէս Հալէպը, որ կը նկատուի Սուրիոյ տնտեսական մայրաքաղաքը: Դէպքերու պատճառով վնասուեցան ազգային բազմաթիւ հաստատութիւններ, եկեղեցիներ, մեծ թիւով գործատեղիներ եւ բնակարաններ:

Այս պատճառով ալ, անցնող ամիսներուն, Հալէպի հայկական շարք մը հաստատութիւնները վերածուեցան մարդասիրական գործի կեդրոններու: Ստեղծուեցան անմիջական օգնութեան մէկէ աւելի կեդրոններ, որոնք զբաղեցան հալէպահայութեան օժանդակութեան գործով: Երկրի ապրած տագնապին պատճառով մեծաթիւ հայ ընտանիքներ դիմագրաւեցին տնտեսական լուրջ հարցեր:

Հալէպահայ ընտանիքներուն օժանդակելու



նպատակով կազմուած բարեսիրական աշխատանքներու յանձնախումբներուն մէջ մեծ դեր ունեցան Հ.Մ.Ը.Մ.ական քոյրերն ու եղբայրները: Անոնք մաս կազմեցին անմիջական օգնութեան, հայաբնակ թաղամասերու մաքրութեան, սննդակողովներ պատրաստելու եւ բաշխելու աշխատանքներուն, ինչպէս նաեւ՝ նուիրական զանազան ծառայութիւններու, որոնք մեծ արձագանգ ձգեցին ոչ միայն հալէպահայութեան, այլեւ՝ քաղաքի ընդհանուր բնակչութեան վրայ:

Հ.Մ.Ը.Մ.ական քոյրերն ու եղբայրները իրենց կատարած երդումին իւրաքանչիւր բառը լիովին իրագործելով, այսօր, իրենց ժամանակը կ'անցընեն ազգօգուտ աշխատանքներով: Բարեսիրական աշխատանքներու ծիրին մէջ անոնք դարձած են մէկական նուիրեալներ, որոնց կատարած աշխատանքը կը նմանի պատերազմի դաշտին վրայ

մարտնչող զինուորին զոհաբերութեան: Իւրաքանչիւրը օրինակելի տիպար մը դարձած է իրեն վստահուած պարտականութեան եւ պարտաւորութեան մէջ:


Ազգանուէր այս աշխատանքներով Հ.Մ.Ը.Մ.ականը կու գայ անգամ մը եւս փաստելու, թէ ան կը մնայ ծառայասէր այն նուիրեալը, որ իր գործունէութեամբ ու աշխատանքով կը բարձրանայ ու կը բարձրացնէ իր ազգակիցները հայոց պատմութեան, ամէնէն տագնապալի հանգրուաններուն իսկ:





ԹԻՒՆԻՆ ՆԻՒԹԵՐՈՂ

MARZIG SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN
 مارزیک مجلّة رياضية شهرية تصدرها جمعية الهومنتمن الرياضي



Մարզական ամսաթերթ
 Հրատարակություն՝ Հ.Ս.Ը.Ս.ի
 ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

31 ՐԴ ՏԱՐԻ, 2012, ԹԻՒ 8 (362)



Հ.Ս.Ը.Ս.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

- Խմբագրական 2
- Պատգամ 3
- Անդրադարձ 5
- Պատմություն 9
- Ակնարկ 13
- Մեր Տեսակցությունները 14
- Մասնաձիղէ Մասնաձիղ 17
- Մեր Կորուստները 36



ԲԱԺԻՆՆԵՐ

- Մանկապատանեկան 38
- Տարբեր Հայեացքով 40



ԽՄԲԱԳԻՐ
 Վիգեն Աւագեան
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
 Սեդա Պէշեան (Լիբանան),
 Սեւան Նազարեան (Ֆրանսա),
 Մարո Քէշիշեան (Արեւմտեան Մ.
 Նահանգներ), Յակոբ Խաչատուրեան
 (Արեւելեան Մ. Նահանգներ), Տիրան
 Շահինեան (Գանատա), Ռազմիկ
 Յովհաննիսեան (Հայաստան)

ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ
 Պատրիկ Կիւլաէնկեան, Գրիգորիս
 Պողարեան, Աբօ Մոսիկեան
 (Լիբանան), Յարութ Մատենլեան
 (Արեւմտեան Մ. Նահանգներ),
 Զարեհ Տէրվիշեան (Գանատա)

Էջադրում - Արշօ Պալեան
 Գրաշարութիւն - Շողիկ Պոյաճեան
 Colour Seperation - Photogravure Paklayan
 Կողքի Ձեւաւորում Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷ
 Պուրժ Համուտ, Գինիշեանի Թաղ
 «Սեւան» Շէնք, Գ. Յարկ
 Հեռ: 01/248043, Fax: 01/260117
 E-mail: marzig@homenetmen.org
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

ՅՐԻՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին
 հատաձեւադրի սակն է 4000 Լ.ո.:
 Տարեկան բաժանորդագրութեան սակ
 ծշողած է 48000 Լ.ո.:
 Լիբանանէն դուրս թերթին
 բաժանորդագրութիւնը
 կը կատարեն Հ.Ս.Ը.Ս.ի Մեկուսի
 եւ Շրջանային Վարչութիւնները:
 Թերթը ուղղակի Լիբանանէն
 կը ստացուի անձնական
 բաժանորդագրութեամբ
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան
 եւ Եւրոպական երկիրներ \$70,
 Ամերիկա եւ Աւստրալիա՝ \$75):



ԽՄԲԱԳՐԱԿՆՆԵՐ

ՅԱԶՈՐԴՆԵՐ ԴԱՏՐԱՍՏԵՆՔ

Կեանքի անողոք օրէնքն է մահը: Մահուան գերանդին կը գործէ միշտ, ամէնուրեք, եւ մասնաւորաբար, մեր կեանքին մէջ:

Մասնաւորաբար կ'ըսենք, որովհետեւ մեր կեանքը աւելի դիրութիւններ կ'ընծայէ գերանդին չարաշուք գործին համար: Միութենական մարդը աւելի շատ կը տագնապի, շուտ կը մաշի եւ... կը հալի:

Կը բաւէ թերթատել «Մարգիկ»ի վերջին տարուան թիւերը, ուր «Մեր կորուստներ»-ու բաժինը լեցուն է անուններով, որոնք տասնամեակներ շարունակ Հ.Մ.Ը.Մ.ի ճամբով աշխատած են իրենց ժողովուրդին եւ հայրենիքին համար, իրենց ուժերուն առաւելագոյն կարողութեամբ: Անդարձ մեկնած են միութենական վաստակաշատ դէմքեր, որոնք անմոռանալի գործեր կատարած են իրենց կենդանութեան:

Սգալու համար չէ որ կ'արձանագրենք այս տողերը, այլ՝ մտածելու համար: Ճակատագիրը,- ինչպէս կը սիրէ ըսել մեր ժողովուրդը,- իր գործը կը տեսնէ, սակայն ճակատագիրը չէ որ կը կատարէ մահուան գործած աւերներուն դարձանունը. մարդն է, մարդիկն են, միութիւններն են, որոնք կրնան մեկնողներուն ձգած բացը գոցելու աշխատանքը կատարել:

Նախ՝ վառ պահելով մեկնողներուն յիշատակը, չմոռնալով տարիներու ընթացքին անոնց ունեցած ծառայութիւնները եւ հետեւելով անոնց բացած ազգային, գաղափարական ու միութենական ուղիին:

Յետոյ՝ ինչ որ նոյնքան կարելոր է ու անհրաժեշտ, մեկնողներուն տեղ յաջորդներ պատրաստելով: Միայն այդ ձեւով կը յարատեւէ միութիւն մը, ու ոչ

միայն կը յարատեւէ, այլեւ՝ կը զարգանայ:

Անշուշտ, ամէն սերունդ ունի ծառայութեան իրեն յատուկ ձեւը, աշխատանքի հասկացողութիւնը, ժամանակի պահանջները ըմբռնելու եւ գործելու եղանակը: Կարելորը այդ բոլորը չեն, կարելորը մեկնողներուն հաւատքը ունենալն է:

Մեկնողները կը հաւատային Հ.Մ.Ը.Մ.ին, հայութեան, Հայաստանին եւ Հայ Դատին: Պէտք է պատրաստել մարդիկ, որոնք սերը, կապուածութիւնը եւ նուիրումը ունենան այդ բոլորին եւ պատրաստ ըլլան իրենց ժամանակը, հանգիստն ու կեանքը զոհել անոնց համար:

Մեկնողները կը հաւատային, որ իրենց նպատակներուն կարելի էր հասնիլ միութենական կեանքի ճամբով, հանրային գործով, անշահախնդրութեամբ եւ կարգապահութեամբ:

Նորերը պիտի մտածեն այս մասին, իրենց մէջ զօրացնելով միութենականութեան ոգին, հաւաքական ու ներդաշնակ աշխատանքի տրամադրութիւնները, իրարմով ազգին պատկանելու գիտակցութիւնը՝ այդ բոլորը վերածելով *ամբողջական մասնակցութեան* մեր կեանքին եւ *գիտակից յանձնառութեան* ի խնդիր ազգային մեր ձգտումներուն եւ իտէալներուն:

Լացն ու սուգը բաւարար չեն իւրաքանչիւր կորուստէ ետք, որովհետեւ յարգանքի զգացումը մեծագոյն գնահատանքն է մեռնողներուն հանդէպ:

Մեկնողները գաղափարի եւ նուիրումի գինուորներ էին, որոնց յիշատակը իսկապէս յարգած կ'ըլլանք, երբ անոնց արժանաւոր յաջորդները կը պատրաստենք:

Սգանք, բայց մտածենք, լրջօրէ՛ն մտածենք նաեւ այս ուղղութեամբ:

Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԱՊՐՈՒՄԻ, ԳՈՐԾԻ ԵՒ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ԶԱՀԱԿԻՐԸ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ՊԱՏԳԱՄԸ՝ Հ.Մ.Ը.Մ.-«ԿԱՄՔ»Ի 100-ԱՄԵԱԿԻ ՅՈՒԲԵԼԵՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ, ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ)

Կեանքի մէջ միշտ առաջինը տարրեր եղած է: Մանուկի մը առաջին թոթովանքը, առաջին քալուածքը, պատանիի մը առաջին փորձութիւնը, առաջին ուրախութիւնը, երիտասարդի մը առաջին վկայականը, առաջին սէրը, առաջին զաւակը, տարբեր արժէք եւ նշանակութիւն ունին, անկասկած:

Առաջինը ըլլալ կը նշանակէ միշտ առաջինը մնալու մարտահրաւէրը ունենալ: Տեւական ջանք թափել առաջինը մնալու, լաւն ու լաւագոյնը ըլլալու համար:

Առաջինը ըլլալ կը նշանակէ նաեւ անդրանիկը ըլլալ: Բարոյական պարտաւորութիւնը ունենալ մնացեալէն աւելի հասուն եւ փորձառու ըլլալու: Մնացեալին օրինակ դառնալու եւ առաջնորդի դեր ստանձնելու:

Սա պահուն, այս բոլոր մտածումները մեր միտքը կու գան, որովհետեւ մենք պարտականութիւնը ունինք ողջոյնի խօսք փոխանցելու Հ.Մ.Ը.Մ.ական մասնաճիւղի մը մասին, որ պատիւը ունի առաջինը ըլլալու միութեան պատմութեան մէջ: Արդարեւ, Հ.Մ.Ը.Մ.-«Կամք» Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհասփիւռ մեծ ընտանիքի 103 մասնաճիւղերէն առաջինն է, որ այս տարի կը բոլորէ իր հիմնադրութեան 100-ամեակը:

Անձանօթներու կրնայ անհասկնալի թուիլ, թէ ինչպէս Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ մը գոյութիւն ունեցած է նախքան Հ.Մ.Ը.Մ.ը, որովհետեւ միութիւնը հիմնուած է 1918-ին, մինչդեռ Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ը ստեղծուած է 1912-ին:

Պատասխանը շատ պարզ է: Հ.Մ.Ը.Մ., իբրեւ մտածողութիւն, մտայնութիւն եւ ապրում, գոյութիւն ունեցած է նախքան Հ.Մ.Ը.Մ.ական կառոյց եւ կազմակերպութիւն ըլլալը: Իսկ ատոր պատիւը կ'երթայ Աղեքսանդրիոյ մեր գաղութին, որ անհրաժեշտութիւնը, բայց մանաւանդ հեռատեսութիւնը



ունեցած է մարզական եւ սկստական գործունէութիւն ունենալու՝ նախքան Հ.Մ.Ը.Մ.ի ծրագիր-կանոնագիր գոյութիւն ունենալը:

Ի վերջոյ ի՞նչ է Հ.Մ.Ը.Մ.ը՝ դրօշակ, քայլերգ, կանոնագիր թէ այդ բոլորէն առաջ ապրում, գործ եւ առաքելութիւն:

Հ.Մ.Ը.Մ.-«Կամք» եղած է Հ.Մ.Ը.Մ.ական ապրումի, գործի եւ առաքելութեան ջահակիրը, որովհետեւ ան ջահը ստանձնած է հայ մարմնակրթութեան մեծ վարպետէն՝ Շաւարշ Քրիսեանէն, ինչ որ կրկնակի պատիւ ըլլալու կողքին, պարտաւորեցնող հանգամանք է մասնաճիւղին համար:

Որովհետեւ Շաւարշ Քրիսեանը հիմնադիր ունենալը կ'ենթադրէ Շաւարշ Քրիսեանի աւանդին ու ժառանգութեան

տէրը ըլլալ: Հայ մարմնակրթութեան արժէքներուն եւ լսկգրունքներուն պահապանը ըլլալ:

Ու անվարան պէտք է հաստատել, որ Հ.Մ.Ը.Մ.-«Կամք» անցնող մէկ դարուն եղաւ ու մնաց Շաւարշ Քրիսեանի յիշատակին արժանաւոր տէրը: Ան ծաւալեց սկստական լայն գործունէութիւն, երբ գաղթաշխարհի այլ չրջաններ գաղափար իսկ չունէին սերնդակերտ այս շարժումին մասին:

Ան ծաւալեց մարզական սքանչելի շարժում, երբ հայ թէ օտար չրջանակներ հազիւ համեստ քայլեր կը նետէին այս ուղղութեամբ:

Իսկ ամէնէն կարեւորը, Հ.Մ.Ը.Մ.-«Կամք» Աղեքսանդրիոյ գաղութին ճամբով եզիպտահայութեան եւ ամբողջ Սփիւռքին տուաւ հոյ մը դէմքեր, որոնք ազգային ինքնութեան եւ դաստիարակութեան ախոյեանները հանդիսացան տասնամեակներ շարունակ:

Հայ մարզական պատմութեան ոսկեմատեանը հարուստ է Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի անուանի մարզիկներուն անուններով: Ո՛վ պիտի չուզէր հպարտանալ լսելով անունները Պերճ Տէտէ-

եանի, Արմենակ Ալաճաճեանի, Երուանդ Բարձաքսրզեանի, Պերճ Թոսունեանի, Կարպիս Ափրիկեանի, Զաւէն Բրուտեանի, Ճիմի Լաչինեանի, Արամ Սարգիսեանի, Անահիտ Սարգիսեանի, Վարդանոյշ Պանտայեանի եւ բազմաթիւ ուրիշներու:

Կարելի՞ է գլուխ չխոնարհել վաստակին դիմաց սկառուտական այն մեծ առաջնորդներուն, որոնց ռահվիրան կը հանդիսանայ աննման Բարսեղ Օհանեանը:

Տակաւին, պէտք է յիշել այս բոլորը համադրող, կազմակերպող ու առաջնորդող վարչականները՝ Մանուկ Մանուկեանը, Թովմաս Քողիկեանը, Մելքի Գլընճեանը, Լեւոն Ափրիկեանը, Նուպար Թնկրեանը, Նուպար Մանուկեանը, Խաչիկ Շահպազեանը, Անտոն Մինասեանը, Պերճ Հալլաճեանը, Ռոպէր Քոչիկեանը, Պերճ Խորասանճեանը, Արա Աբգարեանը, Սիլվա Հալլաճեանը, Զոհրապ եւ Վահան Գաւուքճեանները եւ ուրիշներ:

Ու ներեցէք, եթէ անգամուան մը համար խախտենք ընդունուած կարգը եւ ողջունենք ու գնահատենք նաեւ պատնէշի վրայ եղողները, որոնք 100-ամեակի այս հանդիսութիւնը կը կազմակերպեն, մասնաճիւղը ոտքի կը պահեն եւ համայն հայութեան ազգային գոյատեւման լաւագոյն պատգամները կ'ուղղեն Աղեքսանդրիայէն:

Կ'արժէ անգամ մը ծափահարել անոնց համար: Այս ծափերով, յարգելի ներկաներ, դուք կը գնահատէք 100-ամեայ վաստակ մը եւ անոր անսակարկ ծառայողները:

Այս ծափերով դուք նաեւ խթան կը հանդիսանաք նորերուն, որպէսզի անոնք ընթանան այսօրուան պատասխանատուներուն ճամբով:

Յարգա՛նք իր 100-ամեակը բոլորող Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ին եւ վարձքը կատար անոր հին ու նոր բոլոր երախտաւորներուն, ըլլան անոնք այստեղ, թէ պայմաններու բերումով, աշխարհի տարբեր անկիւնները սփռուած:

Արդարեւ, Հ.Մ.Ը.Մ-ի այս դարաւոր կաղնին, այսօր, իր թեւերը տարածած է լայնօրէն եւ ճիւղեր արձակած է նաեւ Գանատայի եւ Աւստրալիոյ մէջ, ուր փոխադրուած նախկին աղեքսանդրահայեր հիմնած են իրենց պաշտելի միութեան անունով մասնաճիւղեր՝ մէկական Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»եր Մոնթրէալի եւ Սիտնիի մէջ: Այսպէս, Հ.Մ.Ը.Մ.-«Կամք» դարձած է ձեւով մը աշխարհակալ մասնաճիւղ՝ իր անդամները տարածելով Միջին Արեւելքէն մինչեւ Գանատա



եւ հեռաւոր Աւստրալիա: Ասիկա իր նմանը չունեցող երեւոյթ է Հ.Մ.Ը.Մ-ի պատմութեան մէջ, որուն համար ալ «Աշխարհակալ մասնաճիւղ»ի անունը կ'արդարացնէ լիովին, մանաւանդ որ Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի երկու անդամներ՝ Մոնթրէալէն եւ Սիտնիէն, եղբայրներ Հրաչ Տէր Սարգիսեան եւ Սարգիս Տէր Պետրոսեան երկուքական նստաշրջանով պատիւը ունեցած են մաս կազմելու Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան, դառնալով դեկավար անդամները աշխարհասփիւռ այս մեծ կազմակերպութեան:

Աւելի՛ն, Աղեքսանդրիոյ ջուրը խմած, Ազգ. Պօղոսեան վարժարանի շուքին տակ հասակ նետած եւ Ապուտարտարի ակումբին մէջ գաղափարական իրենց կազմաւորումը ստացած այս երկու եղբայրները Հ.Մ.Ը.Մ-ի ներկայացուցիչները եղած են Համահայկական Խաղերու Համաշխարհային Կոմիտէին մէջ: Իսկ ասկէ աւելի պատուաբեր բարձունք դժուար թէ կարելի ըլլայ նուաճել մասնաճիւղի մը կողմէ:

Կարելի չէ տօնակատարութեան մը խօսքի սահմաններուն մէջ ընդհանուր արժեւորումը կատարել միութենական այն արժէքներուն եւ սկզբունքներուն, որոնք բնորոշ եղած են Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի մեծ ընտանիքին:

Հ.Մ.Ը.Մ.-«Կամք» ծնաւ հայ ժողովուրդի ծոցէն, հայ ժողովուրդին եւ Հայաստանին ծառայելու անվերջ ուխտով:

Յարգելիներ, Հ.Մ.Ը.Մ-ի ծրագիրը ծանօթ է ամէն հայու. «Առողջ միտք, առողջ մարմնի մէջ» նշանաբանէն մեկնելով՝ Հ.Մ.Ը.Մ- իր անդամներուն կը պատգամէ հաւատարիմ ըլլալ հայ ժողովուրդին, ծառայել ազգին եւ հայրենիքին: Աւելի գեղեցիկ պատգամ դժուար է երեւակայել:

Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի 100-ամեակին առիթով, արդար հպարտութեամբ մը կը հաստատենք, որ Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ով սկիզբ առած Հ.Մ.Ը.Մ-ը այսօր դարձած է ողջ հայութեան երիտասարդական մեծագոյն կազմակերպութիւնը, իր 103 մասնաճիւղերով՝ տարածուած աշխարհի հինգ ցամաքամասերուն վրայ:

Նոր 100-ամեակի մը սեմին, մեր մաղթանքն է, որ Հ.Մ.Ը.Մ-ականի առողջ ոգին անպակաս ըլլայ «Աշխարհակալ» Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի բոլոր անդամներուն մօտ, որպէսզի անոնք շարունակեն իրենց սիրելի միութեան ճամբով ծառայել իրենց պատկանած գաղութներուն, հայրենիքին ու հայութեան, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ-ական ըլլալու նախապայմանն է այդ:

Կեցցէ՛ Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ը:
Կեցցեն՝ յաւերժական հայութիւնն ու Հայաստանը:



ՎԱՀԱՆ ՉԵՐԱԶԻ ԱՂՋԻԿՆ ՈՒ ԹՈՌՆԻԿԸ ԿԸ ՎԵՐՅԻՇԵՆ
ՀԱՅ ՍԿԱՌԻՏՈՒԹԵԱՆ ՄԵԾ ԵՐԱԽՏԱԻՈՐԻՆ ՈՂԻՍԱԿԱՆԸ

ԳԻՒՄՐԻԻ ՏՕՆԸ

Հայ սկաուտութեան 100-ամեակի տօնակատարութիւնները պակասաւոր պիտի մնան առանց Վահան Չերազի յիշատակին ոգեկոչման:

Չերազ՝ հայ սկաուտութեան մեծ երախտաւորը իր անջնջելի կնիքը ունի Հայաստանի Ա. Հանրապետութեան սկաուտական շարժման կազմակերպման ու տարածման մէջ: 1920-ին, ան մաս կը կազմէ Երեւանի իշխանութիւններուն հրաւերով հայրենիք գործուղուած Յ.Ս.Ը.Ս.ի եռանդամ մարմնին: Որբերէն ան կը պատրաստէ սկաուտներ:

Հայաստանի խորհրդայնացումէն ետք, Չերազ իր աշխատանքները կը շարունակէ իբրեւ ամերիկեան որբանոցներու ուսուցիչ: Կը կազմէ սկաուտական նորանոր խումբեր եւ կը մարզէ որբեր: Ան կը գործէ դժուարին եւ նոյնիսկ անկարելի պայմաններու մէջ, մինչեւ որ 1927-ի չարաբախտ օր մը, ան զոհ կ'երթայ համայնավար խորշակին:

Վահան Չերազի կինը ըլլալու «յանցանք»ով կը սպաննուի նաեւ Վարդուշ Չերազ: Կը փրկուի միայն Չերազ ընտանիքին դուստրը՝ Բիրակնը, որ մինչեւ օրս կ'ապրի Երեւանի մէջ:

Այս եւ նախորդ թիով տրուած յօդուածը կը կրէ Բիրակն Չերազի գաւկին՝ Վահան Իշխանեանի ստորագրութիւնը: Յօդուածին մէջ, 85-ամեայ Բիրակն Չերազ եւ գաւակը կը վերյիշեն իրենց հօր ու մեծ հօր ապրած ողիսական պայմանները, ձերբակալութիւնն ու գնդակահարումը Բերիայի կողմէ:

Յօդուածը գրուած է անցեալ տարի եւ հրապարակուած է «Tert.am» համացանցի կայքէջին մէջ:



Վահան Իշխանեան ԵՐԵՒԱՆ

- Անունը դրել էին դաշնակցական **աւանտիւրա**, ինչ դաշնակ, պոլշեւիկների վայրագութիւններին չդիմացաւ ժողովուրդը ու ապստամբեց, - ասում է Պապոյեանը, - Փետրուարեան ապստամբութիւնից յետոյ երկիրը հանգստացաւ, ճնշումներն ու սպանութիւնները վերացան: Մինչեւ 1923 թ. երկիրը շատ խաղաղ էր, Չերազը ընկերներին նամակ էր գրում, թէ եկէք Հայաստան:

Պապոյեանը դեռ տասնհինգ տարի առաջ Չերազի, Ղորղանեանի ու Մազմանովի անունները վերականգնելու շարժում էր սկսել, քայց էն ժամանակուայ Հ.Հ.Շ.ական քաղաքապետ Միքայէլ Վարդանեանը չէր ուզել, դաշնակցական կառավարութեան սպաների ու Վազգէն Մանուկեանի կնոջ պապի անունով փողոց անուանակոչելը կը նեղացնէր Լեւոն Տէր Պետրոսեանին:

Իսկ նոր քաղաքապետ Վարդան Ղուկասեանը, որ իմանում է նախաձեռնութեան մասին շատ է ուրախանում ու իրականացնում:

«Ինչ էլ ասեն, էդ մարդու հասցէին, ես իրեն միշտ շնորհակալ կը լինեմ», - ասում է մամաս:

- Մարտին Օսեան կար, գրել էր «Հայաստանում ջրացատկային սպորտի զարգացումը», առաջին անգամ նրանից լսեցի Վահան Չերազի անունը, մայրը որբանոցում էր մեծացել, պատմել էր որ Վահան Չերազը Արփաչայում գէօլ էր կապել, մի աշտարակ կառուցել ու որբերին ջրացատկ էր սովորեցնում: Էդ էէէ, 1970-ական թուերն էր, - պատմում է Պապոյեանը, մանկավարժական ինստիտուտի սպորտային մանկավարժութեան ամպիոնի պրոֆեսօր, - պատկերացնում էք, որբերի 100 ֆուտպոլային թիմ է ստեղծել, որբանոցների դիմացը ամբողջ ֆուտպոլի դաշտեր, ուր անընդհատ ֆուտպոլ են խաղացել: Հէնց Հայաստանի առաջնութեան առաջին ֆուտպոլիստները էս որբերից են եղել:

Երբ արդէն Գիւմրիի հիւրերին պիտի դիմաւորէին, մենք թէյը խմեցինք ու իջանք Թումանեանի անուան գրադարան, ճակատին քար է տեղադրուած՝ «Այս տանը ապրել է Հայաստանում սկաուտական շարժման հիմնադիր Վահան Չերազը, 1925-1927»:

Վարդանոյչին՝ տատիս 1937 թուին էստեղից են տարել: «Արմենիա նաու»ում գրել եմ մօրս պատմածը:

«Գիշերը Չեկան ներխուժեց մեր տուն, տունը տակնու-

վրայ արեց, եւ մօրս տա-
րան: Գիշերանոցով, ոտա-
բոպիկ վազում էի մեքե-
նայի յետեւից: Նրան այ-
լեւս չտեսայ: Յետոյ, տա-
սը տարեկան աղջիկ,
գնում էի բանտ, հերթ էի
կանգնում, որ ուտելիք
հասցնեմ մօրս, հերթս
հասնում էր, ասում էին՝
էստեղ էդպիսի մարդ
չկայ, գնացէք Չեկա,
գնում էի Չեկա, հերթս
հասնում էր, ասում էին՝
էստեղ չի: էդպէս էլ չկա-
րողացայ մօրս որեւէ
բան հասցնել: Երկու
ամիս ուշացումով մօ-
րիցս բացիկ ստացայ,
խնդրում էր տաք հա-
գուստ: Գնացինք բանտ,

ասացին, որ այլեւս նա
լենինականում չի: Իմ բազմաթիւ դի-
մումներին պատասխանում էին, որ նա դատապարտուել է
տասը տարուան աքսորի՝ եռեակի կողմից, առանց նամակագ-
րութեան իրաւունքի: Հետագայում Երեւանի բանտից ազատ-
լած մի կնոջից լսեցի, որ նա սպաննուել է Երեւանի բանտերից
մէկում: Նրան ձերբակալեցին, քանի որ համարձակուել էր լի-
նել Վահան Չերազի կինը, եւ որ եղբայրը ապրում էր Փարի-
զում:

Մի քանի օր դպրոց չգնացի: Ես գերազանցիկ էի, ու նկարս
փակցուած էր պատուոյ տախտակին: Երբ մտայ դպրոց, տե-
սայ, որ նկարս հանուած է: Ես արդէն համարուում էի ժողովրդ-
դի թշնամու աղջիկ»:

Պապիս էլ, տատիս էլ գնդակահարում են 41 տարեկանում,
ինչպէս Հախվերտեանն է երգում՝ իմ պապերը ինձնից ջահել
հեռացան: Ու մամաս 10 տարեկանում որբանում է:

- Էջոն քո ի՞նչն է եղել,- հարցնում է Պապոյեանը:
- Էջոն տատիկս էր:
- Հարազա՞տ:

- Հարազատից աւելին: Իմ սիրելի տատիկս: Էջոն մամայիս
առաջին ամուսնու Պօղոս Չեննէեանի եղբօր կինն էր: Նրանք
կողքի գիւղից էին: Պետրոսը Եւրոպայում կրթուած մարդ էր,
եկել էր իր գիւղը զարգացնելու, դպրոցում ուսուցիչ էր: Զար-
դերի ժամանակ մամաս հօրանց տուն է եկած լինում, թուրքե-
րը մտնում են գիւղ, Պօղոսին աշակերտների հետ դպրոցում
վառում են: Ամբողջ էդ գաղթի ճամբէքը մամաս էջոյի հետ է
անցնում:

- Ասում են, որ էջոն ճաշ էր սարքում, ամբողջ թաղը բոյ-



«Տորք» հայ մարմնամարզական միութեան ֆութպոլի խումբը
1908ին, Պոլիս: Կեդրոնը, աթոռի վրայ նստած՝ Վահան Չերազ:

րը բռնում էր,- ասում է
Պապոյեանը:

- Էէ, տատիկս ինչ
ճաշեր էր սարքում,
ասում էի՝ տատի, դու
ինչ համալսարան ես
աւարտել որ հսպէս ճա-
շեր ես սովորել, քթի
տակ ժպտում էր:

Որ եկանք էրեւան,
մամաս էլի յիշեց էջոյին,
թէ ինչպէս էին տատի
հետ ընկած բանտից ԿԳԲ
մօր համար ուտելիք տա-
նում, բայց ամէն տեղ
մերժում էին վերցնել:
«Այն փոքրիկ աղջիկը ու
ծեր տատիկը իրար ձեռ
բռնած»:

- ԿԳԲ-ից վերջը կարողացայ Վարդանոյշի գործերի պատ-
ճէնը ստանալ, քիչ բան էր մնացել: Էնտեղ կայ, թէ ո՞վ է մատ-
նել Վարդանոյշին, գիտէ՞ք ո՞վ,- հարցնում եմ Պապոյեանին:

- Փիրղալամեանը:
- Հա, մէկը ինքը: Նաեւ Յուլակ Հայկազեանը:

Պապոյեանը զարմացաւ, Հայկազեանը յայտնի ազգային
ու մարզական գործիչ էր ու շատ յարգուած մարդ:

Մեղադրական եզրակացութիւնը հազիւ ա կարդացում,
ժամանակին, գետառը վարարել ա, լցուել ԿԳԲ-ի արխիւ, ու
փաստաթղթերի մի մասը ոչնչացել են, մի մասի շրիֆտն էլ
ջրից լղղուել ա:

Նաեւ գրուած է, որ Վարդանոյշը Հոկտեմբերի 8-ից
գտնուում է ՆԿՎԴ-ի Լենինականի բանտում:

Մամաս չի կարդացել արձանագրութիւնները: Մամ, գի-
տե՞ս մեղադրականում գրուած է թէ մամադ դաշնակցական
ժողովներ է արել:

- Մամայիս ընկերուհու աղջիկը՝ Բեբեկը ընկերուհի ունէր
ԿԳԲ-ում՝ Նորան: Բեբեկին խնդրեցի, ասի՝ ինչ կը լինի Նորա-
յին հարցրու՝ ինչի՞ են մամայիս տարել: Հարցրել էր, էկաւ
ասեց՝ Բիւրակ, մամադ ձեր նկուղում դաշնակցական գաղտ-
նի ժողովներ է կազմակերպել: Ի՞նչ ժողով, մեր նկուղը աւե-
րակ տեղ է, մի երկու թթու է դրուած, էնտեղ մարդ չի տեղա-
ւորուել,- ասացի,- Ուրեմն, տանն են արել,- Մեր տանը ոչ մի
ժողով չի եղել, մէկ-մէկ հիւրեր էին գալիս, նստում քարթ էին
խաղում:

Միւս փաստաթուղթը եռեակի արձանագրութիւնից քաղ-
լածք է, ուր երկու խօսքով նոյն մեղադրանքն է եւ որոշումը:

- Ախր Հայաստանը մամայիս զգուշացրեց: Հայաստանը
որբերից էր եղել, ԿԳԲ-ում մեքենագրուհի էր աշխատում, լաւ
յիշում եմ էդ օրը, գիշերով գաղտնի, որ ոչ ոք չտեսնի, էկաւ
մեր տուն, Վարդանոյշ քոյրիկ, փախի էստեղից, քեզ բռնելու
են: Մամաս բանի տեղ չդրեց՝ ի՞նչ եմ արել որ բռնեն, ասեց:

«Իմ ուրիշ բանաձեւը» էսսէում գրել էի:

«Մամաս ասում է, որ մինչեւ 80-ականներ երազում էր, որ
մայրը, հնարաւոր է, չի գնդակահարուել, հաւանաբար սի-
պիրեան աքսորում է, գուցէ ամուսնացել է, երեխաներ ունի:
Եւ սպասել է, որ մի օր իր քոյրերն ու եղբայրները իրեն
կը գտնեն: Եւ միայն անցեալ տարի մօրս երազները փլուեցին,
երբ ես ԱԱԾ-ից ստացայ փաստաթուղթ, որ տատիս՝ Վարդա-
նոյշ Անդրէասեանին, գնդակահարել են եռեակի որոշմամբ»:

Տասնմէկ տարեկան երեխայ, գնացի ԿԳԲ-ի պետի տուն,
տեղը ցոյց էին տուել, բարձրացայ երկրորդ յարկ, դուռը ծե-
ծեցի, բացեցին, հարցրի մամաս ո՞ւր է, ինչո՞ւ էք տարել, ու
սկսեցի լաց լինել, նա բան չասեց, մուսլ նայում էր ինձ: Ոնց
էի նուաստացել:

Մկրտիչ Հեքիմեանին ու Աւետիս Յովհաննիսեանին նոյն-
պէս գնդակահարում են:

- Դէ Հայկազեանը մեղք չունի, պատկերացնում եմ ինչ
կտտանքների են ենթարկել, որ իրենց ուզածը ասել է, - ասում
ա մամաս:

- Ձերբակալել էին,
այ ես չգիտէի, իսկ Փիր-
ղալամեանի՞ն:

- Չէ, նրան չէին ձեր-
բակալել: Բոլորը գիտէ-
ին Գիւմրիում, որ բան-
սարկուծիւններ է տա-
լիս ԿԳԲ-ին:

Վարդանոյշ Չերազի
արդարացման 1958 թ.
որոշման մէջ Հայկազ-
եանի անունը չկա՞յ:
«Վարդուշ Չերազին դա-
տապարտելու համար
հիմք են հանդիսացել օր-
գանի ստացած տեղե-
կատուական բազմաթիւ
հաղորդումները, որոնց
բովանդակութիւնը,
ինչպէս եւ վկաներ Այ-

վազեանի, Փիրղալամեանի, Կարապետեանի եւ միւսների
ցուցմունքների բովանդակութիւնը կոնկրէտ եւ որոշակի
չեն... Վարդոյշ Չերազը իր գաղտնի կազմակերպութեան
պատկանելու հանգամանքը ժխտել է»: Յետոյ նշում է, որ
կոպիտ խախտումներով է գործը քննուել, դատախազի
սանկցիա չի եղել, մեղադրանք չի առաջադրուել, օպերատիւ
տեղեկանքները հաւաստի չեն, թարգմանիչ չի հրաւիրուած եւ
այն ու վերջում՝ կարճել գործը յանցանքը չապացուցուած լի-
նելու պատճառով:

Բայց ո՞վ է Այվազեանը, 1937-ի արձանագրութեան մէջ
չկայ, գուցէ ռուսերէն АЙКАЗЯН հայերէնում Այվազեա՞ն է
դառել:

Առաջին անգամ երբ կարդացի արձանագրութիւնը, Հայ-
կազեանի անունը աչքս ծակեց, որովհետեւ գործում բերուած
անուններից միայն նրան եմ ճանաչել: Մարզուած մարդ էր,
ծեր տարիքում էլ ոտքով Հայաստանի մի ծերից միւս ծերը
քայլում էր: Հիմա, մտածում եմ, որ արձանագրութեան
առաջին տպաւորութեան տակ մարդուն մատնիչ են համա-
րել, բռնել, տանջել են մարդուն, տատիս անունը տուել է:

- Իսկ այ սա էն տունն է, որ մամայիս տանելուց յետոյ ապ-
րում էինք,- ցոյց ա տալիս մամաս աւտոյի լուսամուտից:

- Այսինքն:
- Մամայիս որ տարան, մեզ սնից դուրս արեցին, բերեցին
էս տան մէջ մի խուց տուեցին:

Ու յետոյ իջնում ենք Վահան Չերազ փողոցով: Չորսի կող-
մերն էր:

16:15 Տօնական շքերթ



Կանաւորներու խումբ մը, 1916, Երեւան:
Վահան Չերազ կանգնած՝ աջէն երրորդը:

16:30 Քաղաքապետա-
րանի շէնքի բացման
արարողութիւն:

17:00 Խաչքարերի
պուրակի բացման արա-
րողութիւն:

Խաչքարերի մօտ
յայտնուեցինք չորս անց
քանիս, դիմացը երկար
ժապաւէն էր կապուած
ու ոստիկանները չթողե-
ցին մօտիկից նայենք: Ար-
դէն Երեւան գալուց յե-
տոյ հրաւիրատուսում
կարդացի ու իմացայ, որ
խաչքարերի բացում պի-
տի լինէր: Յետոյ «Հան-
րային»ով իմացայ, որ
դրանք Չուղայի խաչքա-
րերի պատճէններն են:

Հրապարակում ուստիկանները կանգնած՝ չէին թողնում առաջ գնանք, մամաս հանեց հրաւիրատումը ու ցոյց տուեց՝ տեսէք ես հրաւիրուած եմ: Բայց չանցաւ, մէկ է ուստիկանը ասեց, որ նոր քաղաքապետարանի շէնքի յետեւով շրջանցենք ու էն կողմից հրապարակ մտնենք: Էլ ոչ մի տեղ առիթ չեղաւ, որ հրաւիրատումը ցոյց տայ:

- Երկիրը գոփում են, ամէն ինչը իրենցն ա, ու սէնց տօներով ժողովրդի աչքին թող են փչում,- Ջղային ասեց Սերժը:

Հրապարակում ահագին ժողովուրդ էր հաւաքուել: «Կարմիր կապոյտ նարնջագոյն», «Երկիր ես սիրում եմ քեզ» երգերը բարձր հնչում են, համերգը դեռ չէր սկսուել, պիտի լինէր ըստ ծրագրի:

17:30 տօնական համերգ Վարդանանց հրապարակում:

Էս ի՞նչ նոր արձան են դրել: Գիւմրիի հրապարակի կենտրոնում:

Վարդան Մամիկոնեանը ձիու վրայ, Ղեւոնդ Երէցը թուրը ձեռին, Իշխան Կամսարականը, Սահականոյշը եւ էլի ինչ որ կաթողիկոս՝ հերոսական արշաւում են ուղիղ վրադ: Բայց, սպասի, Հայաստանում առաջին կնոջ արձանն է՝ Սահականոյշը: Չէ, էլի կան կանանց արձաններ, բայց սիմպոլներ են, կոնկրէտ կին չեն, ինչպէս ասենք՝ մայր Հայաստանը:



Վահան Չերազի ձեռագիրներէն:

Արեւի քարտէսը կ'ընայրէր,
 Հրեայ ամառներէ աճելէ յետոյ պրազայ
 Ի՞նչ էս առեւ օր: Ի՞նչ ամառներէն էն շրջի, պար-
 ժանց աչք է որ ապարաւներս սրբայ զարշալէ
 այստեղ կող հայրենասիրի քաղաքիցս յիսկ և
 զգործակ: այս ակաւոյ յայտարարէ և՛ զիսկ հար-
 լաւ, մաւաւաւ որ յարմարութեւ չ'էր, քան որ քո-
 բաւ զիս Իսրայիլ և՛ յիսկ և՛ յիսկ:
 Կ'իսրայիլայի թէ որքան աւազ ժամը Կ'իսր-
 աւելի ապրուի, Երուսաղիմ յիսկ կարօտու արեւելեան
 Գործակէ: անո՞ք ի՞նչ ակաւոյն իսրայիլ և՛ յարաւ:
 Ե՛ւ ինչպիսի յիսկ ինչպիսիս և՛ յարաւ ի՞նչ ակաւոյ
 սփառի քաղաք, արաւ արեւելեանիցս Կ'իսրայիլ
 արեւելի թէ այս ակաւոյն: Երբ արեւելի մէջ աւազ-
 յարաւ յիսկ յիսկ արեւելի յիսկ արեւելի ակաւոյն-
 տեղ, քաղաք անո՞ք ինչպիսիս արեւելի ար-
 յարեւելի յիսկ յիսկ այս ակաւոյն արեւելի, որ միայն
 յար արեւելիս արեւելի և՛ ապարաւներս յարաւ:
 Ինչպիսիս արեւելիս թէ միայն արեւելիս
 արեւելիս արեւելի չ'իսկ, և անո՞ք արեւելի արեւելի
 մտքի չ'է ակաւոյ: Երբ արեւելիս արեւելի, արեւելի
 ինչ անո՞ք արեւելի արեւելի Կ'իսրայիլ միայն ար-
 արեւելիս արեւելի և՛ յարաւ:
 արեւելիս արեւելի և՛ յարաւ:
 Կ'իսրայիլ Գ. Չերազ

- Էս կոմերիտու-
 հու արձանն է, նոյն
 ձեւով մնացել է,-
 կենտրոնական այ-
 գում մամաս ցոյց է
 տալիս 80 տարի
 առաջուան իր ման-
 կութեան պահ-
 պանուած պատ-
 կերները,- էս սա-
 լայատակի քարե-
 Վահան Չերազ
 (ձախին, նստած)
 1923ին,
 Աղեքսանդրապոլ
 (Գիւմրի): (Վերջ)

ըր նոյն քարերն են, ոչ մի բանի ձեռք չի տրուած: Այ էն շէնքը տես-
 նում ես, թատրոնի հին շէնքն է,-
 խարխուլ մի շէնք,- միշտ դերասան-
 ները դիմացը նստած էին:

Բարձրանում ենք Գորկա, այգու գլխաւոր հատուածը:

- Դու պատկերացնում ես ինչ հրաշք բան է հստեղ սահնակով մինչեւ հնտեղ գնալը, դէ պատկերաց-
 ըրու, թէ ես ինչ ժամանակ եմ անց-
 կացրել, իմ սահնակն էլ արտասահ-
 մանեան էր, դեկով դեկավարուող,-
 ցոյց է տալիս մամաս Գորկայից գա-
 ուիվար իջնող ճանապարհը,- Չէ, լաւ
 էր, որ եկանք, էնպէս երջանիկ եմ,
 չես պատկերացնի: Այ կարուսեղները
 նոյն տեղը մնացել են: Նոյնիսկ այն
 ռոտոնդան է մնացել նոյնութեամբ,
 էդտեղ նուագախումբ կար, նուա-
 գում էր ու երիտասարդները պա-
 րում էին, դէ իմացի ինչ քաղաք էր:

18:00 Հիւրասիրութիւն «Ովասիս» ռեստորանում:

- Ռեստորան «Ովասիս»ը սա է, էս-
 տեղ տեռասաձեւ իջնում էին երեք ջրաւազան, շատ գեղեցիկ
 էր, ջրաւազանները հանել են էս ռեստորանն են սարքել:

- Ջրաւազանները կան, ռեստորանի մէջ են,- ասեց Պապոյ-
 եանը:
- Կ'ուզե՞ս հիւրասիրութեանը գնաս,- հարցնում եմ:
- Չգիտեմ, եթէ հին ծանօթներիս կը տեսնեմ, կ'ուզեմ
 գնամ:
- Ինչ հին ծանօթ, պաշտօնեաներ են լինելու:
- Հա՞, կարծո՞ւմ ես: Դէ լաւ յետ գնանք:
 Այգում մոլտքի մօտ ասեցին, որ հէնց նոր Սերժ Սարգսեա-
 նի կորտեժը անցաւ:

Երեկոյեան «Հայուր»ով նայեցի էն ինչ չէի տեսել, հրա-
 պարակում աստղերի համերգ ու Արտակ Ալեքսանեանը ու-
 րախ ժպիտով ազդարարում է՝ «Գիւմրին վերածնուում է»:

ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՄԵՐՁԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ (Բ. ՇՐՋԱՆ, 1931-1940)



Կր վերսկսինք ներսես Արք. Բախտիկեանի Հ.Ս.Ը.Ս.ի պատմութեան նուիրուած կոթողային անտիպ գործին հրատարակութեան եւ «Մարզիկ»-ի այս թիւէն սկսեալ մեր ընթերցողներուն կր ներկայացնենք Հ.Ս.Ը.Ս.ի Սիջին Արեւելքի գործունէութեան երկրորդ տասնամեակը՝ 1931-1940: Բեղուն տասնամեակ մը, որ լեցուն է հայ մարդուն ծակատը բարձր պահող Հ.Ս.Ը.Ս.ական յաղթանակներով եւ իրագործումներով:

Ներսես Արք. Բախտիկեան (1911-1989)
ԱՆՏԻՊ, Ա. ՄԱՍ

Հ.Ս.Ը.Ս. Սուրբիոյ եւ Լիբանանի կեանքին երկրորդ շրջանին վարագոյրը կը բարձրանայ, կազմակերպումի ճամբուն վրայ խոչընդոտներ դիմակալած ու հարթած, շնորհիւ միութեան վարիչներուն եւ անդամներուն աննկուն ջանքերուն:

Տարուէ տարի, Սուրբիոյ եւ Լիբանանի մեծ ու փոքր հայկական գաղութներուն մէջ ճիւղեր նետած Հ.Ս.Ը.Ս.-ը, իր դեկավարներով, սկսուած գործին վրայ աւելի հաստատ հաւատքով կը դիմաւորէ 1931-ի Նոր Տարին՝ սարքելով Պէյրուսթ, Հալէպ, Լաթաքիա, Դամասկոս մարզական ու գեղարուեստական երեկոյթներ. պատրաստուելով նոյն ատեն Յունուար 18-19-ին գումարուելիք շրջանին գերագոյն ժողովին:

Դեռ 20 Նոյեմբեր 1930-ին, Շրջանային Վարչութիւնը օրակարգի խնդիրներ ու հրահանգներ պարունակող գոյգ շրջաբերականներով կը հրաւիրէր շրջանի մասնաճիւղերը մասնակցելու Դեկտեմբերին Պէյրուսթի մէջ գումարուելիք Պատգամաւորական ժողովին: Եւ

սակայն, ուշացած ըլլալով Փարիզի մէջ գումարուող Պատգամաւորական Ընդհանուր ժողովի գեկուցումը, Սուրբիոյ եւ Լիբանանի Պատգամաւորական ժողովը յետաձգուած էր 1931 Յունուար 18-19-ին:

Շրջանային Վարչութիւնը պարտաւորուած էր յետաձգել նաեւ Յունուարի թուականը, որովհետեւ Փարիզի Պատգամաւորական Ընդհանուր ժողովի Սուրբիոյ եւ Լիբանանի ներկայացուցիչ Վրոյր Հալէպեան կը գրէր, որ «Սուրբիոյ եւ Պուլկարիոյ շրջանին տեղեկագիրները ջերմօրէն գնահատուեցան Պատգամաւորական Ընդհանուր ժողովին կողմէ: Ժողովը իր նիստերը շարունակելու վրայ է, Զատիկուան մօտ հազիւ կրնայ վերջացնել իր աշխատանքը»: Ուստի, Շրջանային Վարչութիւնը խորհելով որ Զատիկուան օրերուն կը ստացուի ամբողջական տեղեկագիր, կը հրահանգէ մասնաճիւղերուն, որ պէսզի Զատիկուան միջ-մասնաճիւղային Ֆութպոլի ախոյեանական մրցումներուն՝ Պէյրուսթ, գումարուի նաեւ շրջանի Բ. Պատգամաւորական ժողովը:



Մինչ այդ, մասնաճիւղերը կը լծուին ներքին մեղուաջան աշխատանքի:

Պէյրուսթ, Նոր Տարին սարքած մարզական ու գեղարուեստական երեկոյթէն ետք, կը ձեռնարկէ պասքէթպոլի դաշտին հարթումին, սկսուական խումբերու կազմութեան Հայկ Դաւիթեանի ու Յովհաննէս Սերոբեանի ջանքերով: Ֆութպոլի դաշտը կ'օժտէ նոր յանձնախումբով: Թրիփոլի մասնաճիւղը տա-



պէրեանին տունը: Տոքթորը կը խօսի անոնց, կ'ոգեւորէ, կ'ոգեւորուին ու կը վերակազմեն մասնաճիւղը, երբ հոգիէ բաղկացած վարչական կազմով կիրակոս Թապաքեան, Սարգիս Ունճեան եւ Միհրան Գալաճեան: Այս առժամեայ վարչութիւնը կը դիմէ Շրջանային վարչութեան առ ի վաւերացում:

Նորընտիր այս վարչութեան առաջին գործը կ'ըլլայ Փութպոլի խումբին կազմութիւնը, հայթայթելով Փութպոլի գնդակ, գուլպայ, կօշիկ ու շապիկ: Այս բոլորը գնելու համար անդամավճարները չեն բաւեր: Ներքին փոխառութեամբ այդ գումարը կը գոյացնեն ու կը պատրաստուին, ըստ Շրջանային վարչութեան Մարտ 10 եւ 25 շրջաբերականներու հրահրին, Չատուան միջ-մասնաճիւղային հանդիպումներուն Պէյրութ գտնուելու, Պատկէքի մասնաճիւղին հետ խառն խումբով:

Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ եւ Լիբանանի կեանքին գեղեցիկ ու գովելի երեւոյթներէն մէկը սկսեք էին դառնալ Չատուան միջ-մասնաճիւղային Փութպոլի ախոյեանական մրցումները, կեդրոնական քաղաքներէն մէկուն կամ միւսին մէջ: Տարուէ տարի աւելցող մասնաճիւղերը այս հանդիպումներուն դիմագիծը պիտի փոխէին իրենց տողանցքներով եւ իրենց կարողութիւններուն համաձայն բաժանումներով դասակարգերու: Այս առթիւ 25 Մարտ 1931 թուակիր շրջաբերականը կը բացատրէ ու կը հրահանգէ. «Շրջանիս այս տարուան միջ-մասնաճիւղային Փութպոլի մրցումները տեղի պիտի ու-

կաւին կը զբաղեցնէ Շրջանային վարչութիւնը, որ կախակալուած վարչութեան տեղ կը նշանակէ առժամեայ վարչութեան անդամներ Տիրան Օհանեան, Կիրակոս Պոյաճեան, Տիգրան Չալեան «մինչեւ նոր ընտրութիւն» մասնաճիւղին գործերը վարելու: Խնդիրը հոս կանգ չառնելու: Շրջանային վարչութիւնը, երկրորդ անգամ ըլլալով, Թրիփոլի կը դրկէ Խորէն Սուքիասեանը, որուն գեկուցումին վրայ կ'որոշուի 2 Փետրուար 1931-ին Հ.Մ.Ը.Մ.էն վտարել Մինաս Արծրունին, Գեորգ Փափագեանը եւ Յովհաննէս Ազրլեանը: Եւ սակայն, ասոնց դրդումով, իրենց հրաժարականը ներկայացնող 22 անդամներուն առիթ կը տրուի որ յետս կոչեն եւ ստանան իրենց անդամութեան իրաւունքը: Շրջանային վարչութիւնը նոյն ատեն կ'որոշէ «մամուլի միջոցաւ Թրիփոլիի հայ հասարակութեան կողմը ուղղել, հրահրելու ժողովուրդը, ոյժ տալու Հ.Մ.Ը.Մ.ին եւ ջբաջալերելու անջատողական ձգտում ունեցող որեւէ շարժում»: Արդարեւ, հայ ժողովուրդը իր ոյժի բաժինը պիտի բերէր անվերապահ կերպով, իր ներկայութեամբ, Հ.Մ.Ը.Մ.ի սարքած վարդանանցին, 14 Փետրուար 1931-ին:

Հալչպ զբաղած է ներքին լուրջ աշխատանքով: Նոր Տարուան առթիւ սկսուածներու կողմէ հանգանակութիւն, Ա. Բ. Գ. եւ սկսուածական Փութպոլի խումբերու վերակազմութիւն, Իւնիոն Սփորթիփի, Վասպուրականի եւ այլ խումբերու հետ մրցում, Սուրիոյ եւ Լիբանանի Բ. Պատգամաւորական ժողովի պատգամաւորներու ընտրութիւն, Սկսուած Խորհուրդի կազմութիւն: Սուրէն Գալենտէր, Միսակ Պրժեան, Գեղամ Ազկիւլեան, տոքթ. Գասապեան, Կոպեռնիկ Մանսուրեան: Միւս կողմէ, թեմիսի դաշտի օգտագործում, Հալչպի հայկական քեմիի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի ենթամասնաճիւղի կազմութիւն:

Չահլէի մասնաճիւղը, որ լաւ սկզբնաւորութիւն ունեցած էր, գաղութին ազգային կեանքի պայքարէն ազդուելով, ատեն մը անդամալոյժ վիճակի կ'ենթարկուի: Այս վիճակին շարունակումը վնաս պիտի բրայր եւ Հ.Մ.Ը.Մ.ին եւ թէ տեղւոյն մատող սերունդին: Ուստի, Մարտ 1931-ին, երիտասարդներ ու պատանիներ կը հաւաքուին տոքթ. Յակոբ Պէր-



նենան Պէյրութի մէջ, Չատուի առաջին եւ երկրորդ օրերը:

«Նկատի ունենալով մասնաճիւղերու Փութպոլի խումբերու կարողութիւններուն անհաւասարութիւնը, գանոնք չգրկելու համար քաջալերանքէ ու յաղթանակէ, Շրջանային վարչութիւնս մրցումները դասաւորեց այսպէս.

- «Ա. Ախոյեանութիւն.
- «Բ. Ախոյեանութիւն.
- «Առաջին ախոյեանական մրցումներուն պիտի մասնակցին Պէյրութի, Հալչպի եւ Դամասկոսի մասնաճիւղերը: Երկրորդ ախոյեանութեան մրցումներուն՝ Լաթաքիա, Թրիփոլի եւ Չահլէ-Պատկէք խառն մասնաճիւղերը:

«Իւրաքանչիւր ախոյեան խումբի պիտի տրուի մէկական արծաթեայ ռաժակ:

«... Մրցումներուն սկսելէ առաջ տեղի պիտի ունենայ ընդհանուր տողանցք, Երկուշաբթի, դաշտին վրայ, նուազախումբի առաջնորդութեամբ:

«Հ.Մ.Ը.Մ.ի դրօշը պիտի գտնուի խումբերուն գլուխը, մասնաճիւղեր իրենց շրջանի թիւերուն կարգով պիտի հետեւին իրենց դրօշներուն:

«Իւրաքանչիւր մարզիկ, պարտաւորիչ կերպով, համագեաստի կուրծքին վրայ, ձախ կողմը, պէտք է կրէ կտակէ պատրաստուած Հ.Մ.Ը.Մ.ի նշանակը. համագեաստները պէտք է ըլլան միօրինակ եւ մաքուր:

«Մախսերը սահմանուած են.



«Ա իւրաքանչիւր մասնաճիւղ կը հոգայ երթեւեկի իր ծախսը:

«Բ. Շրջանային վարչութիւնը կը հոգայ իւրաքանչիւր մասնաճիւղի խաղացողներուն պանդուկի եւ սնունդի ծախսը:

«Խումբերը պէտք է անպայման Շարաթ իրիկուն Պէյրութ գտնուին»:

Շրջանային վարչութիւնը այս շրջաբերականէն ետք, արդար հպարտութեամբ, մամուլին մէջ կը յայտարարէ հայ հասարակութեան, որ վեց մասնաճիւղեր պիտի մասնակցին միջ-մասնաճիւղային ախոյեանական մրցումներուն, ուստի «Հայ հասարակութիւնը կը հրահրուի իր ներկայութեամբ քաջալերելու հայ մարզիկները»: Արձանագրենք, որ որպէս խումբ վեց է, իսկ որպէս մասնաճիւղ, մասնակցողներուն թիւը եօթն է:

Հ.Մ.Ը.Մ.ի կեանքէն ներս պարզուող այս գեղեցիկ երեւոյթին ի տես, հայ մամուլը պիտի կոչէր ԴէՊի ԴԱՇՏ ու շարունակէր. «Այս երեկոյ Պէյրութ կը հասնին Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ եւ Լիբանանի բոլոր մասնաճիւղերուն Փութպոլիստները:

«Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային վարչութեան այս բացառիկ կարգադրութիւնը կրկնապէս արժէքաւոր է եւ օգտակար: Գնահատելի է այն ճիւղը, որ Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկները եւ մասնաւորաբար անոնց նկարիչները ի յայտ կը բերեն, մարզական ոգին վառ պահելու մեր երիտասարդութեան մօտ եւ հանրային համակրանք շահելու անվերապահ քաջալերութեան արժանի այս կազմակերպութեան օգտին:

«Վաղը եւ հետեւեալ օրը, խաղադաշտին վրայ, մեր մարզիկները պիտի ճակատին իրարու հետ, ընտրելու համար այս շրջանի ախոյեան խումբը: Հանրային մեծագոյն հետաքրքրութեան արժանի այս մրցումները ոչ միայն անձկութեան ժամեր պիտի ապրեցնեն խաղացող հայ մարզիկներուն, այլ հազարաւոր պէյրութահայութեան, որոնք անկասկած պիտի ողողեն ընդարձակ դաշտը: Որովհետեւ չկայ աւելի մեծ հաճոյք եւ ուրախութիւն մեր ներկայ գաղթական կեանքին մէջ, քան տեսնել այն եղբայական հզօր կապը, որ մարզական ոգին

միացուցած է մեր երիտասարդութիւնը իրարու: Մեր ազգային առօրեայ կեանքին մէջ պատահած ոչ մէկ դէպք կամ իրադարձութիւն պիտի չկարենար արթնցնել այն սուր հետաքրքրութիւնը, զոր պիտի արթնցնէ մարզանքը:

«Դէպի դաշտ: Բոլոր պէյրութահայութիւնը պէտք է խիտ շարքերով, վաղը եւ միւս օր, առաջնորդուի խաղաղաշտ, վայելելու մեր անձնուէր մարզիկները, որոնք այս տօնական օրերուն ամէն կողմէ մեզի կու գան» («Ազդակ», 4 Ապրիլ 1931):

Միջ-մասնաճիւղային այս հանդիպումները տեղի կ'ունենան: Այս առթիւ, «Մարզիկ» ստորագրութեամբ «Ազդակ»-ի 14 Ապրիլ 1931-ի համարին մէջ կը կարդանք.

«Հ.Մ.Ը.Մ-ի այս տարուան միջ-մասնաճիւղային Փութպոլի մրցումները տեղի ունեցան մեծ խանդավառութեամբ, հոծ բազմութեան մը առջեւ, Զատիկի կիրակին՝ Հ.Մ.Ը.Մ-ի, Իսկ Երկուշաբթին՝ Ամերիկեան Համալսարանի դաշտին վրայ:

«Մրցումները, որոնց մասնակցեցան եօթը մասնաճիւղեր, անցան կանոնաւոր ու բաւական յուզումնալից, մանաւանդ աւարտականները:

«Թրիփոլի խումբը, հակառակ այդ քաղաքին մէջ Փութպոլի ուրիշ խումբերու չգոյութեան ու վերջին ատեններս տեղի ունեցած կարգ մը քայքայիչ դէպքերու պատճառաւ տկարացած ըլլալուն, ցոյց տուաւ անսպասելի խաղարկութիւն մը եւ գովելի կարգապահութիւն: Ան իր տկարութեան գիտակցելով հանդերձ, Շրջանային Վարչութեան կողմէ տրուած հրահանգը գործադրելու եւ ընդհանուր եղբայրական համախմբումէն չզրկուելու համար, ամէն գոհողութիւն յանձն առնելով ներկայ գտնուեցաւ:

«Զահլէ-Պալպէք խառն խումբը, հակառակ բոլորովին նորակազմ ըլլալուն, ցոյց տուաւ խոստումնալից խաղարկութիւն մը, ինչ որ գովելի էր:

«Լաթաքիոյ խումբը, իր մէջ ունենալով հոն փոխադրուած նախկին մարզիկներ ու մանաւանդ շարունակական փորձե-

րու կարելիութեան մէջ գտնուելով, որոշ ու նկատելի արժէք մը ներկայացուց, յուսադրելով ապագային ներկայանալ իրեն առաջնակարգ խումբերէն մէկը: Անիկա տարաւ յաղթանակը ու շահեցաւ Շրջանային Վարչութեան կողմէ նուիրուած Բ. կարգի ախոյեանական բաժակը: Շնորհաւորելի են այս չորս մասնաճիւղերը իրենց թափած ճիգերուն համար:

«Գալով Դամասկոսին, կարելի է անմիջապէս ըսել, թէ իր Ա. խումբը մեծ յառաջդիմութիւն կատարած է անցեալ տարուան ախոյեանական մրցումներէն ասդին: Ան ամբողջ խաղարկութեան ընթացքին նեղ դրութեան մէջ թողուց իր մրցորդ Հալէպի խումբը ու գրեթէ համազօր ոյժ մը ներկայացուց այս վերջնոյն, որը փենայթիի մը տարբերութեամբ շահեցաւ խաղը:

«Հալէպի ու Պէյրութի Ա. խումբերուն մրցումը եղաւ ամենահետաքրքրականը, ըլլալով Ա. կարգի ախոյեանութեան վճռական խաղը: Այս խումբերուն ամբողջ խաղարկութեան ընթացքին, հասարակութիւնը լարուած հետաքրքրութեան պահեր ապրեցաւ գնդակին փոխն ի փոխ բերդերուն մօտենալուն:

«Աւարտական մրցումին, Հալէպ ի յայտ բերաւ խաղարկութեան նրբութիւն. խաղին վերջաւորութեանը մօտ շահած մէկ կէտովը անիկա արդէն ախոյեան կը նկատուէր, եթէ Պէյրութ, աւելի սեղմ ու կորովի խաղարկութեամբ մը չբաժնէր յաղթանակը մէկի դէմ մէկով, որ յետոյ փենայթիով մը ի նպաստ իրեն վճռեց ախոյեանութիւնը:

«Ուղարկութեան ու մանաւանդ պարտութեան ժամանակ, Հալէպի մարզիկները ցոյց տուին մարզիկի վեհանձն ոգի մը, որ անկեղծօրէն գովելի էր: Անոնք, խաղէն անմիջապէս վերջ, Վահրամ Իւթիւճեանի կողմէ տրամադրուած ախոյեանութեան բաժակը յանձնուած միջոցին կողք-կողքի կեցան Պէյրութի իրենց եղբայրներուն հետ եւ անոնց ուրախութեան մասնակից ըլլալով, սրտանց շնորհաւորեցին զանոնք: Իսկ թէ ինչ կը վերաբերի Պէյրութի Ա. խումբին, որը տեղւոյն առաջնակարգ խումբերէն է, կրկնապէս շնորհաւորելի է իր կարգապահ ընթացքին, լաւ խաղարկութեան եւ այն շնորհալի ելոյթին համար, որով խաղի սկզբնաւորութեան գեղեցիկ ծաղկեփունջ մը նուիրեց իր մրցորդ խումբին:

«Մասնաճիւղերու խումբերուն, Մերձաւոր Արեւելքի Որբերու Ընկերակցութեան նուագախումբին առաջնորդութեամբ կատարուած տողանցքը ներգործող սպաւորութիւն ձգեց, ժողովուրդէն խլելով բոլուն ծափեր, մանաւանդ այն պահուն երբ թրիպիւնին առջեւէն կ'անցնէր տողանցքը:



(Շար. 1)



ԼԵՎԱՄ-Ը՝ ՄԵՐ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՆ ՓԱՆՁԱՐԱՆԸ

Վ. Ալազեան ՊԵՅՐՈՒԹ

ԼՄ-Ը Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան կարեւորագոյն նախաձեռնութիւններէն մէկն է ԼԵՎԱՄ-ը, որ ահա 45 տարիէ կը համախմբէ լիբանանահայ վարժարաններու երկսեռ աշակերտները: ԼԵՎԱՄ-ի խաղերը մէկկական պայքարներ են մեր աշակերտութեան համար, սակայն այդ պայքարները թշնամիի մը դէմ չեն, այլ՝ ձուլման, այլասերման եւ բարոյական ապականութեան դէմ:

Դիւրին չէ ԼԵՎԱՄ-ի խաղերուն կազմակերպումը այնպիսի օրերու, երբ նոր սերունդը գերին դարձած է արհեստագիտական նորութիւններու, ու երբ համակարգիչ, համացանց, բլիթային հեռաձայն, Այ փետ ու Այ փոտ ժամերով գինք գամլած կը պահեն բազկաթոռներու վրայ: Միայն շնորհակալ պէտք է ըլլալ ՀՄ-Ը Մ-ի պատասխանատուներուն, որ ԼԵՎԱՄ-ի խաղերու կազմակերպումով կը փորձեն աշակերտները դուրս բերել նստակեաց ու մենակեաց այդ վիճակէն եւ զանոնք կը շողկապեն հայկական առողջ միջնոլորտի հետ, անոնց հրամցնելով մարզական մաքուր միջավայր մը:

Մեր կեանքի իսկական յաջողութիւններէն մէկն է ԼԵՎԱՄ-ը: Ան յաջողած է ու կը յաջողի շնորհիւ ԼԵՎԱՄ-ի առաջելութեան լծուած խումբ մը պատասխանատուներու հաւատարմէն, շնորհիւ հայկական վարժարաններու տնօրէնութիւններու, մարզանքի դասատուներու եւ մարզասէր աշակերտներու հաւաքական ճիգերուն: Ան կը յաջողի յատկապէ՛ս զոհողութեամբը այն ծնողներուն, որոնք իրենց թանկագին ժամանակը տրամադրելով՝ երբեք չեն զլանար

չաբաթավերջերուն իրենց զաւակները առաջնորդելու ՀՄ-Ը Մ-ի մարզադաշտեր:

ԼԵՎԱՄ-ի խաղերուն մասնակից աշակերտները իրենք զիրենք մէկ մասնակը կը զգան ՀՄ-Ը Մ- կոչուող մեծ ընտանիքին, որուն մաս կազմած են կամ կը կազմեն իրենց հարազատները, հարազատներուն ծանօթները, իրենց դասընկերները, տարեկիցները, իրենցմէ մեծերը, ինչու չէ նոյնիսկ ուսուցիչները... Պատկանելիութեան այդ զգացումը ամէնէն կարեւոր յատկանիշն է մարզասէր աշակերտներուն մօտ: Այդ զգացումին ամրապնդման շնորհիւ անոնք կը սորվին խմբային միասնական խաղ խաղալ, իրենց ու մրցակից դասընկերները յարգել, կարգապահ ու հնազանդ ըլլալ եւ հասնիլ հաւաքական ճիգերով կերտուած յաղթանակներէն անձնական գոհացում ստանալու վիճակին, եսակեդրոն անհատէն բարձրանալու ընկերային էակի՝ մարդու վիճակին: Մարդ, որ գիտէ թէ մաս կը կազմէ իրեն նման մարդոցմէ բաղկացած, բայց ընդհանրական նպատակներ հետապնդող մարդոց խումբի մը, միութեան մը, ժողովուրդի մը:

ԼԵՎԱՄ-ը միաժամանակ ՀՄ-Ը Մ-ի պատասխանատուներուն կը փոխանցէ պատգամ մը, թէ՛ միութեան մարզական կեանքի հիմնական դժուարութիւնները կը լուծուին, եթէ անոնք գրաւը ղենեն ԼԵՎԱՄ-էն եկող խոստմնայից աշակերտներու վրայ եւ ներկայացուցչական իրենց խումբերը թարմացնելու համար չդիմեն անծանօթ հասցէներու, որովհետեւ «օտարին հացը փոր չի կշտացներ», մանաւանդ որ այդ «հաց»ը յաճախ կրնայ որդնոտած ըլլալ...

ԼԵՎԱՄ-ի մասնակից աշակերտները մեր մարզական կեանքին գանձարանն են: Հարկ է գուրգուրալ անոնց եւ ճիշդ ձեւով օգտուիլ գիտնալ անոնցմէ:

ՄԿԱՌԻՏՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԱՌՈՂՋ, ԳԻՏԱԿԻՑ ԵՒ ԾԱՌ-ԱՅՈՒՄԷՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼ Է

«ՄԱՐԶԻԿ»ԻՆ Կ'ԸՍԷ Հ.Մ.Ը.Մ.Ի ՍՈՒՐԻՈՅ
ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԱՆԴԱՄՆԵՐԷՆ
ԵՂԲ. ԽԱԺԱԿ ՏԻԼՊԷՐԵԱՆ

Հարգազրոյցը վարեց՝ Րաֆֆի Սիւլախեան
ՀԱԼԷՊ


Կրնա՞ք մեզի ներկայացնել ձեր կենսագրականը եւ ըսել, թէ ի՞նչպէս առած էք Հ.Մ.Ը.Մ.ականի ձեր առաջին քայլերը միութենէն ներս:

- Ծնած եմ Հալէպ, 1953 թուականին, Հ.Մ.Ը.Մ.ական եւ սկառուտական բնոյթ ունեցող ընտանիքի մը մէջ, որուն շնորհիւ Հ.Մ.Ը.Մ.ի հանդէպ իմ սէրս արթնցած է ծնունդէս: Հայրս երկար տարիներ եղած է խմբապետ, իսկ մայրս՝ Ս.Օ.Խ.ի մէջ երբ արեւուչական շարքեր կային, Նոր Գիւղի շրջանի խմբապետուհիներէն մէկը: Այս պատճառով, Հ.Մ.Ը.Մ.ը եւ սկառուտութիւնը մեր ընտանիքին անբաժան մասնիկը եղած են: Նախնական ուսումս ստացած եմ Ազգ. Չաւարեան վարժարանէն, որմէ ետք ուղղուած եմ գործի ասպարէզ: Դպրոցէն հեռանալս զիս երբեք հեռու չպահեց ինքնազարգացման աշխատանքներէն: Շնորհիւ ընտանիքիս եւ Հ.Մ.Ը.Մ.ին, գործիս կողքին, ազատ ժամերուս սկսայ գիրք կարդալ: Անշուշտ, գիտենք, որ Հ.Մ.Ը.Մ.ը այդ միութիւնն է, որ դպրոցական տարիքին հետ կ'ընդունի մանուկներ եւ պատանիներ, հետեւաբար ան եղաւ իմ երկրորդ դպրոցս: 1961 թուականին մուտք գործեցի Հ.Մ.Ը.Մ.ի շարքերը, որպէս գայլիկ: Մեր ժողովները կը գումարէինք Չաւարեան վարժարանէն ներս: Խումբին խմբապետն էր եղբ. Սարգիս Սուրատեանը:

1963 թուականին փոխանցուեցայ սկառուտական շարքեր եւ դարձայ «Կաքաւ» խումբի սկառուտ: Խումբին պատասխանատուն էր եղբ. Ալեքսան Իսկէնտէրեանը:

Այդ օրերուն ինչո՞վ կը յատկանշուէին ձեր աշխատանքները:

- Այդ շրջանին մեր խումբերուն վիճակը կը տարբերէր ներկայ օրերէն. խումբերուն մէջ կային բոլոր



տարիքի եղբայրներ եւ տեղի կ'ունենային համապատասխան դասընթացներ: «Կաքաւ» խումբի աշխատելաձեւը յատուկ էր իր դաստիարակչական գործունէութեամբ: Իւրաքանչիւր խումբ ունէր իր յատկութիւնը. ոմանք աշխոյժ էին ֆուլթպոլի մէջ, ոմանք՝ դաշտային աշխատանքներու, իսկ մենք՝ դաստիարակչական գործունէութեան: Այդ շրջանին մեր խումբերու ժողովները կը գումարէինք Հինգշաբթի երեկոները, իսկ կիրակնօրեայ գործունէութեան համար կը հաւաքուէինք առաւօտեան կանուխ ժամերուն: Ասոնց կողքին ունէինք հերթական արշաւներ, անշուշտ բոլորը կը կատարէինք քալելով եւ հետախուզական նշաններով. իւրաքանչիւրը իր հետ կ'ունենար իր ծրարը:



Հ.Մ.Ը.Մ.ը ի՞նչ սորվեցուց ձեզի:

- Մենք բոլորս գիտենք, որ սկառուտութիւնը պատանիին շարքաշուրթիւն կը վարժեցնէ, սիրելի կու տայ բնութիւնը, ես այդ պատճառով բնութեան հանդէպ ունեցած սէրս կը պարտիմ Հ.Մ.Ը.Մ.ի

սկառուտութեան: Հեծիկ քչե-
լը, Ֆուլթոն խաղալը, լողա-
լը, մարզանքը, այս բոլորը
սորվեցայ սկառուտութեան
մէջ, այնպէս որ Հ.Մ.Լ.Մ.ը
մեզի համար դարձաւ մեր
երկրորդ տունը: Այս բոլորին
կողքին տեղի կ'ունենային
մեր խումբերու բանակում-
ները:

**Տարեկան բանակումները
ի՞նչ յիշատակներ ձգած են
ձեր վրայ:**

- 1960-ական թուականնե-
րուն, որոշ շրջան մը տարե-
կան ընդհանուր բանակումներ չունեցանք, բայց անոնց տեղը
կը կատարէինք երկօրեայ կամ եռօրեայ դպրոց-բանակում-
ներ, որոնց յիշատակներով կ'ապրիմ մինչեւ այսօր: 1968-ին,
ընդհանուր բանակումները դարձեալ վերակենդանացան, եւ
ես մասնակցեցայ բոլոր բանակումներուն: Սկառուտական
կեանքը միշտ լեցուն է անակնկալներով եւ ինչու չէ՝ արկած-
ներով: Ամէնէն յատկանշական դէպքը 1968-ի տարեկան ընդ-
հանուր բանակումն էր: Առաւօտեան կանուխ ժամերուն
արթննալէ ետք, քայլարշաւով ուղղուեցանք «Ռաս էլլա-
սիթ»-ի ծովը, մեր հետ ունենալով մեր պաշարները: Այդ շրջա-
նին ճամբաները բոլորը հող էին. քանի մը ժամ քայլէ ետք
հասանք ծով: Կէսօրէ ետք, օրուան պատասխանատուները
յարմար նկատեցին, որ նաւակով մը ուղղուինք Գալատուրա-
նի ծովը եւ այդ վայրէն դարձեալ քայլարշաւով վերադառ-
նանք բանակավայր: Մեկնումի ժամանակ ունեցանք վիրա-
ւոր եղբայր մը. պատրաստեցինք սկառուտական պատգարակ
մը եւ հերթով շարկելով հիւանդ եղբայրը հասցուցինք բանա-
կավայր: Այդ օր մենք բաւական ուշացանք բանակավայր
հասնելու: Մեր պատասխանատուները մտահոգուած էին մեր
ուշացումով: Ճիշդ է, որ մենք օրին դժգոհ էինք երկար քայլ-
լէն, բայց այսօր մեծ հաճոյքով կը յիշենք այդ օրերը:

Կ'ուզեմ յիշել նաեւ, որ Հ.Մ.Լ.Մ.ի մէջ ես սիրեցի հեծիկ
քչելը եւ մարմնամարզը զարգացաւ իմ մէջս: 1988 թուակա-
նին համարձակութիւնը ունեցայ Հայկէս մինչեւ Հ.Մ.Լ.Մ.ի
Քեսապի բանակավայրը հեծիկով երթալու: Ուղեւորութիւնս
տեւեց մօտ 13 ժամ:

**Ի՞նչ պաշտօններ վարած էք Հ.Մ.Լ.Մ.ի կամ այլ մարմին-
ներու մէջ:**

- 1972-ին, սուրիական բանակին ծառայութեանս պատճա-
ռով ստիպուեցայ հեռու մնալ սկառուտական շարքերէն: Այդ
օրերուն ունէի Առաջնորդի աստիճան: Երեքուկէս տարի բա-
նակին ծառայելէ ետք, վերստին վերադարձայ սկառուտական
շարքեր, եւ երկու տարի մնալէ ետք՝ կեանքի պայմաններու
բերումով շրջան մը ստիպուեցայ հեռու մնալ միութենական
գործունէութենէ: Հ.Մ.Լ.Մ.ի մէջ աշխատանքի երկրորդ
շրջանս սկսաւ պատասխանատու պաշտօններ ստանձնելով:



1990 թուականին գիս հրա-
ւիրեցին Սկառուտ. Խորհուրդի
անդամակցութեան: Խորհուր-
դին ատենապետը եղբ. Միհ-
րան Կարապետեանն էր,
ատենադպիրը ես էի: Երկու
տարի ետք գիս նշանակեցին
Սկառուտ. Խորհուրդի ատե-
նապետ: Սկառուտական շար-
քերու երկսեռ դրութեան որ-
դեգրման շրջանին Հայկէսը
ունեցաւ երկու մասնաճիւղ՝
քաղաք եւ Նոր Գիւղ. ես
ստանձնեցի Նոր Գիւղի բաժ-
նի Սկառուտ. Խորհուրդի փոխ
ատենապետի պաշտօնը: 1995-

1996 թուականին գիս նշանակեցին Սուրիոյ Շրջանային
Սկառուտ. Խորհուրդի անդամ: Խորհուրդին ատենապետն էր
եղբ. Չաւէն Տէրվիշեանը, իսկ ես փոխ ատենապետն էի: Եր-
կու շրջան ետք նշանակուեցայ Շրջանային Սկառուտ. Խոր-
հուրդի ատենապետ: Երկու շրջան ծառայած եմ նաեւ Սուր-
իոյ Շրջանային Վարչութեան: Հ.Մ.Լ.Մ.ի մէջ եղած եմ նաեւ
հեծիկի յանձնախումբի անդամ:

Հ.Մ.Լ.Մ.էն դուրս, երբ Հայկէսի մէջ Բերիոյ Հայոց Թեմի
Ազգ. Վարչութեան որոշումով ընկերային ծառայութեան
խորհուրդը յառաջացաւ, դարձայ անոր անդամներէն մէկը:
Այդ խորհուրդին մէջ տարբեր բնագաւառներէ մարդիկ ներ-
կայ էին եւ ես նկատի առնուեցայ որպէս երիտասարդներու
ներկայացուցիչ: 1999 թուականէն ի վեր անդամ եմ Ս. Գրի-
գոր Լուսաւորիչ եկեղեցւոյ թաղականութեան:

Ի՞նչ կոչ կ'ուղղէք ներկայ պատասխանատուներուն:

- Սկառուտական շարժումը ժամանակի ընթացքին միշտ են-
թարկուած է միջավայրի ազդեցութեան, բայց հիմնական
նպատակը մնացած է նոյնը՝ պատրաստել առողջ, գիտակից
եւ ծառայասէր երիտասարդներ: Հոս կը մնայ յարմարիլ պայ-
մաններուն, որովհետեւ մենք այսօր չենք կրնար գործել այն
ձեւով, որ կը գործէինք 1960-ական կամ 1970-ական թուա-
կաններուն: Ներկայ պատասխանատուները պէտք է աւելի
արհեստավարժ ըլլան, այն իմաստով որ կարենան համակեր-
պիլ ներկայ պայմաններուն, ըլլայ իրենց դաստիարակչական
ծրագիրները փոխանցելու ձեւին եւ կամ այլ աշխատանքնե-
րու մէջ, որպէսզի նիւթերը աւելի հետաքրքրական դառնան
սկառուտներուն: Այս մտահոգութիւնը Հ.Մ.Լ.Մ.ի Պատգամա-
ւորական վերջին երկու Ընդհանուր Ժողովներուն միշտ օրա-
կարգի հիմնական կէտ դարձած է, եւ այդ պատճառով որ-
դեգրուած է Հ.Մ.Լ.Մ.ի ռազմավարական ծրագիրը, որ Պատ-
գամաւորական Ծրդ Ընդհանուր Ժողովին որդեգրուեցաւ
եւ 10-րդ ժողովին արդէն իսկ պատրաստ դարձաւ:

Գալով սկառուտութեան դաստիարակչական ծրագրին,
երբ տեսնեք սկառուտին խոստումն ու դաւանանքը, մեր առ-
ջեւ կը պատկերանայ, թէ ինչպիսի՜ անձնաւորութիւն մը
պէտք է ըլլայ սկառուտը: Մեր պատասխանատուները միշտ

փորձած են տալ լաւագոյնը: Այսօրուան պատասխանատուներուն պարտաւորութիւնը կրկնապատկուած է, որովհետեւ ներկայ սերունդին դաստիարակութիւնը չի նմանիր տարիներ առաջ եղած դաստիարակութեան: Ժամանակին ընտանեկան միջնորդութիւնը կ'օգնէր պատասխանատուներուն՝ իրենց դաստիարակչական ծրագիրները փոխանցելու համար, որովհետեւ մանուկն ու պատանին իրենց տուներէն պատրաստուած կու գային անդամակցելու սկաուտական շարքերուն: Այսօրուան արդիականացած միջոցները չկային, անոր համար դիւրին էր անդամներուն հետ վարուելը: Ներկայ պատասխանատուները պարտաւորութիւն ունին պահելու Հ.Մ.Ը.Մ-ի ոգին, միեւնոյն ժամանակ համակերպելու ներկայ պայմաններուն:



առիթով նախ կ'ուզեմ շնորհակտութիւն մեր բոլոր սկաուտները: Կը մաղթեմ, որ 2012 թուականը ըլլայ խաղաղ տարի մը: Վերջին շրջանին, մեր աշխատանքները սահմանափակուած են ներկայ վայրերուն մէջ: Սկաուտական կեանքը հարստացնողը դաշտային գործունէութիւնները, բանակումները եւ արշաւներն են: Կը մաղթեմ, որ վերադառնան այդ օրերը եւ մեր բոլոր սկաուտները իրագործեն իրենց ծրագիրները: Կ'ուզեմ, որ ներկայ պատաս-

խանատուները աւելի բծախնդիր մօտենան իրենց գործունէութիւններուն, որովհետեւ մենք գիտենք, որ մեծը փոքրին հայելին է, անոր համար պատասխանատուն պարտաւոր է ըլլալ գիտակից՝ իր պարտականութեանց եւ պարտաւորութեանց մէջ:

Նաեւ կ'ուզեմ շնորհակտութիւն յայտնել ձեզի, որ «Մարգրիկ»ի միջոցով առիթը կ'ընծայէք մեզի՝ ներկայանալու ընթերցողներուն:

Որպէս եզրափակում, ի՞նչ կ'ուզէք փոխանցել:

- Հայ սկաուտութեան հիմնադրութեան 100-ամեակին

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby


HOTEL



PAVILLON MONCEAU
PARIS

Full of charme,
Tastefully decorated 36 rooms
and 6 suites with individual
heating / air conditioning,
direct access telephone line,
internet connection, minibar,
safety box and satellite TV.
Private bathroom with hairdryer.
The suites can accommodate
3 adults or a family
with parents and 2 children.

PAVILLON MONCEAU



43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38

infos@pavillon-monceau.com
www.pavillon-monceau.com



Հ.Մ.Ը.Մ.-«ԿԱՄՔ»Ի 100-ԱՄԵԱԿԻ ՅՈՒՐԵԼԵՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ՄԷՋ

ՊԱՍՔԵԹՊՈԼԻ ՄՐՑԱՇԱՐՔ՝ ԵԳԻՊՏԱՀԱՅ ՀԻՆԳ ԱԿՈՒՄԲՆԵՐՈՒ ՄԱՄՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ, ՄԱՐԶԱԿԱՆ ՓԱՌԱՏՕՆ, 100-ԱՄԵԱԿԻ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄՆԵՐ, ՃԱՇԿԵՐՈՅԹ-ՊԱՐԱՀԱՆԴԵՍ ՈՒ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՕՆ՝ ՄԱՄՆԱՃԻՒՂԻ ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐՈՒ ԵՒ ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ՄԱՀԱՑԱԾ ԱՆԴԱՄՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Թղթակից ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

Մեծ տօնին արժանապաշել շուքով, Աղեքսանդրիոյ հայութիւնը 7-9 Սեպտեմբերին ձեռնարկներու շարքով մը նշեց Հ.Մ.Ը.Մ.-«Կամք» մասնաճիւղի հիմնադրութեան 100-ամեակը, հովանաւորութեամբ եգիպտոսի Հայոց Առաջնորդ Աշոտ Եպս. Մնացականեանի, նախագահութեամբ տէր եւ տիկին Նուպար եւ Իրմա Լէյլէկեաններու:

1912-ին, Շաւարշ Քրիսեանի կողմէ հիմնուած «Կամք» Մարմնամարզական





Ակումբը, 1974-ին, Հ.Մ.Ը.Մ-ի համահայկական ընտանիքին միանալով պիտի հանդիսանար միութեան երիցագոյն անդամը եւ միակը, որ հետագային իր անունով մասնաճիւղեր պիտի ունենար Մոնթրէալի եւ Սիտնիի մէջ, ստեղծուած Աղեքսանդրիայէն գաղթած «Կամք»ի նախկին անդամներու կողմէ:

ՄԱՐԶԱԿԱՆ ՓԱՌԱՏՕՆԸ

100-ամեակի ձեռնարկներուն բացումը կատարուեցաւ մարզական փառատօնով մը, որ տեղի ունեցաւ Ուրբաթ, 7 Սեպտեմբերի երեկոյեան ժամը 7.30-ին, մասնաճիւղին Ռամլէի «Յառաջդիմասէր»ի դաշտին վրայ, մասնակցութեամբ եգիպտահայ ակումբներու պասթեթպոլի մրցաշարքին մասնակից հինգ ակումբներուն՝ Գահիրէէն Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ», Հ.Մ.Ը.Մ.-«Նուպար» եւ «Սրբուհի Թերեզա», Աղեքսանդրիայէն Հ.Մ.Ը.Մ.-«Կամք» եւ Հ.Մ.Ը.Մ.-«Նուպար»: Փառատօնին ներկայ գտնուեցան եգիպտոսի Հայոց Առաջնորդ Աշոտ Եպս. Մնացականեան, Աղեքսանդրիոյ Հայոց Առաջնորդական Փոխանորդ Գրիգոր

Քհնյ. Մուրատեան, Հայ Կաթողիկէ Առաջնորդ Գուսան Եպս. Օգոստինոս, Հայ Աւետարանական համայնքէն Յակոբ Կանիմեան, 100-ամեակի ձեռնարկներու նախագահ տէր եւ տիկին Նուպար եւ Իրմա Լէյլէկեաններ, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան, Եգիպտոսի մէջ Հայաստանի դեսպանատան ներկայացուցիչ Արտակ Յովհաննէսեան, Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ Թեմական եւ Քաղաքական Ժողովներու ատենապետներ, Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի ներկայ եւ նախկին վարչականներ եւ 300 մարզասէրներ, մաս մը Աւստրալիայէն, Մ. Նահանգներէն, Լիբանանէն եւ Ապու Տապիէն:

Փառատօնին նախօրեակին, երեկոյեան ժամը 6-ին, տեղի ունեցաւ պասթեթպոլի առաջին մրցումը, որ իրարու դէմ հանեց Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի եւ «Սրբուհի Թերեզա»ի խումբերը: Մրցումը աւարտեցաւ ի նպաստ հիւրընկալ խումբին՝ 87-77 արդիւնքով:

Փառատօնին ազդանշանը տուաւ Արա Գէորգեանի «Հայ մարզիկներու օրհներգ»ը, որուն հետ դաշտ մուտք գործեցին չորս դրօշակակիրներ՝ Արշակ Փափագեան, Վիգէն Խորասանձեան, Կարէն Մոմձեան եւ Կարպիս («Ինկլիզի») Կարապետեան Եգիպտոսի, Հայաստանի, Հ.Մ.Ը.Մ-ի եւ 100-ամեակի դրօշներով: Հնչեցին Եգիպտոսի եւ Հայաստանի քայլերգները, որոնց յաջորդեց յորեկար մասնաճիւղին խօսքը, զոր կարդաց քոյր Մարիա Հալլաձեան:



Աղեքսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի եւ Գահիրէի Հ.Մ.Ը.Մ.-«Նուպար»ի աւարտականին հասած պասթեթպոլի խումբերը:

Լուսանկարները՝ «ՄԹԻՏԻՕ ՌԵՏԱ»-ի

օրերուն Աղեք-



սանդրիա այցելող հայ մարմնակրթական եւ մարզական շարժումի ուսնվիրայ Շաւարշ Քրիսեանի քաջալերանքէն: Քով-քովի գարով անոնք կազմած են «Կամք» Մարմնամարզական Ակումբը:

Շարունակելով, քոյր Հայրաճեան հաստատեց, որ նորակազմ մարզական

այս միաւորը անմիջապէս շրջապատած է իանդամառ երիտասարդութեան երկսեռ շարքերով, որոնք լուսամիտ դեկավարներու առաջնորդութեամբ, յաջորդական տասնամեակներու ընթացքին ձեռք բերած իրենց յաջողութիւններով փառք ու պատիւը հանդիսացած են եգիպտահայութեան եւ

Եգիպտոսի հիւրընկալ հայրենիքին:

Հայրաճեան այս առիթով շնորհակալութիւն յայտնեց 100-ամեակի ձեռնարկներուն հովանաւորութիւնն ու նախագահութիւնը ստանձնած Առաջնորդ Սրբազանին եւ Լէյլէկեան ամուլին, ապա իր խօսքը եզրափակեց ըսելով: «Մեր օրերուն եւս Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ըն-

ARMENIA

for private and group trips

www.saberatours.fr

Saberatours Sevan Voyages



WITH THE COLLABORATION OF
THE NEW AIRLINE COMPANY



Photos: © Yann Arthus-Bertrand/Le Monde, Terre vue du Ciel. Licence 075 960031 Studio VICKEN 2005 PARIS

- Direct Flights
PARIS
YEREVAN
PARIS
- Select your Journey
- Guided Tours for 8 Days or 12 Days



11, rue des Pyramides
75001 Paris
tel 331 42 96 10 10
fax 331 42 96 18 77
saberatours@selectour.com

48, cours de la Liberté
69003 Lyon
tel 334 78 60 13 66
fax 334 78 60 92 26
sevan@selectour.com

67, La Canebière
13001 Marseille
tel 334 95 09 30 60
fax 334 95 09 30 61
marseille@wasteels.fr

32-38, rue Hanrabadoutian
Yerevan
tel 374 10 52 55 55
fax 374 10 56 40 30
sabera@arminco.com



տանիքին հաւատաւոր մէկ միաւորը հանդիսանալով՝ Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ը կը շարունակէ ազգանուէր իր առաքելութիւնը, ֆիզիքական, մարզական եւ բարոյական դաստիարակութիւն ու ոգի ջամբելով նորահաս սերունդներուն»:

100-ամեակի փառատօնին պատգամը փոխանցեց Լիբանանէն յատկապէս հրաւիրուած՝ Հ.Մ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան: Եղբայրը յայտնեց. «Առաջինը ըլլալ կը նշանակէ միշտ առաջինը մնալու մարտահրաւէրը ունենալ: Տեւական ջանք թափել առաջինը մնալու, լաւն ու լաւա-



Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի ատենապետ եղբ. Վահէ Պէնոհանեան կը պարգևատրէ Հայաստանի Եսպանատան ներկայացուցիչ Արսակ Յովհաննէսեանը:

գոյնը ըլլալու համար:

«Առաջինը ըլլալ կը նշանակէ նաեւ անդրանիկը ըլլալ: Բարոյական պարտաւորութիւնը ունենալ մնացեալէն աւելի հասուն եւ փորձառու ըլլալու:

103 մասնաճիւղերէն առաջինն է, որ այս տարի կը բոլորէ իր հիմնադրութեան 100-ամեակը»:

Շարունակելով, եղբ. Մկրտիչեան ըսաւ. «Հ.Մ.Ը.Մ.-«Կամք» եղած է Հ.Մ.-

Մնացեալին օրինակ դառնալու եւ առաջնորդի դեր ստանձնելու:

«Սա պահուն, այս բոլոր մտածումները մեր միտքը կու գան, որովհետեւ մենք պարտականութիւնը ունինք ողջոյնի խօսք փոխանցելու Հ.Մ.Ը.Մ.ական մասնաճիւղի մը մասին, որ պատիւը ունի առաջինը ըլլալու միութեան պատմութեան մէջ: Արդարեւ, Հ.Մ.Ը.Մ.-«Կամք» Հ.Մ.Ը.Մ.-ի աշխարհասփիւռ մեծ ընտանիքի



ՊԱՏԻՒՍ ԱՐԺԱՆԱՅԱԾՔՈՅՐԵՐՆ ՈՒ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ

ՅՈՒՇԱՄԵՏԱԼՆԵՐՈՒ ԱՐԺԱՆԱՅԱԾՔՈՅՐԵՐՆ ՈՒ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ

Տոքթ. Արմէն Գաւուքճեան (մասնաճիւղի նախկին ատենապետ), տոքթ. Գարլօ Կարապետեան (մասնաճիւղի նախկին ատենապետ), Գրիգոր Պազիրկանեան (մասնաճիւղի ամէնէն հին ու երկարամեայ անդամ), Չոհրապ Գաւուքճեան (մասնաճիւղի երկարամեայ անդամ, վաստակաշատ վարչական), Վարդուի Պէնոհանեան (մասնաճիւղի երկարամեայ անդամ, մասնաճիւղին դաշտին բացումը կատարած 1962-ին եւ 1986-ին), Սրբուի Սարգիսեան (մասնա-

ճիւղի երկարամեայ անդամ, պատգամաւոր մարզիկուի), Էլիզ Փափազեան (մասնաճիւղի երկարամեայ անդամ), Մկրտիչ Հաննէեան (մասնաճիւղի երկարամեայ անդամ), Լեւոն Գաղթացեան (մասնաճիւղի երկարամեայ անդամ ու բարերար), Անտոն-Թոնի Մինասեան (մասնաճիւղի երկարամեայ անդամ, մարզիկ ու վարչական), Կարպիս («Ինկիլիզի») Կարապետեան (մասնաճիւղի երկարամեայ անդամ, մարզիկ), Ալիս Մոմճեան-Պահարեան (մասնաճիւղի անցեալի խմբա-

պետուի), Սոնա Շիկիեցեան (մասնաճիւղի անցեալի խմբապետուի), մասնաճիւղի կայքէջի յանձնախումբի անդամներ՝ Յովսէփ Օհանեան, Վահէ Պէնոհանեան, Կարօ Խանձեան, Քրիս Խանձեան, Էտի Թոփալեան եւ Արմէն Լէյլեկեան (վերջին երկուքը Մ. Նահանգներու մէջ)

ՅՈՒՇԱՄԵՏԱԼՆԵՐՈՒ ԱՐԺԱՆԱՅԱԾ ԱՉԳԱՅԻՆՆԵՐԸ

Լեւոն Փափազեան («Յառաջդիմաւոր» մշակութային ակումբի ատենապետ), Կարօ Թումայեանց

Ը.Մ.ական ապրումի, գործի եւ առաքելութեան ջանակիրը, որովհետեւ ան ջանք ստանձնած է հայ մարմնակրթութեան մեծ վարպետէն՝ Շաւարշ Քրիսեանէն, ինչ որ կրկնակի պատիւ ըլլալու կողքին, պարտաւորեցնող հանգամանք է մասնաճիւղին համար, որովհետեւ Շաւարշ Քրիսեանը հիմնադիր ունենալը կ'ենթադրէ Շաւարշ Քրիսեանի աւանդին ու ժառանգութեան տէրը ըլլալ: Հայ մարմնակրթութեան արժէքներուն եւ սկզբունքներուն պահպանը ըլլալ»:




կաղնին, այսօր իր թեւերը տարածած է յայնորէն եւ ճիւղեր արձակած է նաեւ Գանատայի եւ Աւստրալիոյ մէջ, ուր փոխադրուած նախկին աղեքսանդրահայեր հիմնած են իրենց պաշտելի միու-

թեան անունով մասնաճիւղեր՝ մէկական Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»եր Մոնթրէալի եւ Սիտնիի մէջ: Այսպէս, Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ը դարձած է ձեւով մը աշխարհակալ մասնաճիւղ՝ իր անդամները տարածելով Միջին Արեւելքէն մինչեւ Գանատա եւ հեռաւոր Աւստրալիա: Ասիկա իր նմանը չունեցող երեւոյթ է Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան մէջ, որուն համար ալ «Աշխարհակալ մասնաճիւղ»ի անունը լիովին կ'արդարացնէ ան (եղբոր խօսքին անբողջութիւնը տեսնել էջ 4):

Խօսքերէն ետք հասաւ պարգեւատումի պահը: Նախ 100-ամեակի յուշա-

իր խօսքին մէջ, եղբայր ատենապետը նշեց, որ Հ.Մ.Ը.Մ.ի այս դարաւոր



(Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի ատենապետ), տոքթ. Կարպիս Թոսունեան (Աղեքսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ.-«Նուպար»ի ատենապետ), տոքթ. Կարո Արգարեան (Գահիրէի Հ.Մ.Ը.Մ.-«Նուպար»ի ատենապետ), Ժորժ Սարգիս («Սրբուհի Թերեզա»յի ատենապետ), Վահէ Պէնոհանեան (Աղեքսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի ատենապետ):

100-ԱՄԵԱԿԻ ԳՐՕՇԻՆ ԵՒ ՅԻՇԱՏԱԿԻ ՄԵՏԱԼՆԵՐՈՒՆ ԱՐԺԱՆԱՅԱԾ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ

Յակոբ Սայեան (Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի խմբապետ), Կարո Վարժապետեան (Գահիրէի Հ.Մ.Ը.Մ.-«Նուպար»ի խմբապետ), Ռամի Սարգիս

(«Սրբուհի Թերեզա»յի խմբապետ), Կարո Թոսունեան (Աղեքսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ.-«Նուպար»ի խմբապետ), Զաւեն Լէյլեկեան (Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի խմբապետ):

100-ԱՄԵԱԿԻ ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄՔԻՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Յորելեար մասնաճիւղի վարչութեան որոշումով, 100-ամեակի յուշամետալներուն պիտի արժանանան մասնաճիւղի յուշամատենին պատրաստութեան լծուած հետեւեալ եղբայրները.-

Հրաչ Տէր Սարգիսեան (Մոնթրէալ) Եղուարդ Ֆրունճեան (Մոնթրէալ) Գրիգոր Մալեգեան (Թորոնթօ)

Սարգիս Տէր Պետրոսեան (Սիտնի) Յարութիւն Մատթէոսեան (Մելպուրն)

Տոքթ. Սուրէն Պայրամեան (Գահիրէ: Յուշամետալի տուչութիւնը կատարուած 100-ամեակի փառատօնին)





տախտակներ յանձնուեցան Եգիպտոսի Հայոց Առաջնորդին, Հայ Կաթողիկէ համայնքի Առաջնորդին, Հայ Աւետարանական համայնքէն Յակոբ Կանխմեանին, Հայաստանի դեսպանատան ներկայացուցիչին, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական վարչութեան ատենապետին, օրուան նախագահին եւ վեց այլ պատասխանատուներու: Նոյն առիթով, 100-ամեակի յուշամետալներ տրուեցան մասնաճիւղի վաստակաշատ 19 քոյր-եղբայրներու: Յայտարարուեցաւ նաեւ, որ յուշամետալներու պիտի արժանանան Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի 100-ամեակի յուշամատենին պատրաստութեան լծուած վեց եղբայրները, որոնցմէ մէկը՝ եղբ. տոքթ. Սուրէն Պայրամեան փառատօնին ներկայ ըլլալով տեղւոյն վրայ ստացաւ իր յուշամետալը: Կատարուեցաւ նաեւ 100-ամեակի դրօշներու եւ յիշատակի մետալներու տուելութիւն պասքեթպօլի խումբերու



խմբապետներուն (յուշատախտակներու, յուշամետալներու եւ 100-ամեակի դրօշներու արժանացած ազգայիններուն, միութենականներուն եւ մարզիկներուն անունները տեսնել առանձին):

Պարգեւատրումներու ստեղծած միջոցառումը գագաթնակէտին հասաւ Հ.Մ.Ը.Մ-ի «Ծառայութեան» շքանշանի տուելութեամբ: Մասնաճիւղի վարչութեան առաջարկով եւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդ-

րոնական վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի ձեռամբ միութեան «Ծառայութեան» շքանշանով պարգեւատրուեցաւ վաստակաւոր Հ.Մ.Ը.Մ-ական եղբ. Անդրանիկ Միսքեան: Ան փոքր տարիքէն յաճախած է «Կամք» Մարմնամարզական Ակումբ եւ 50 տարուան միութենական կեանքին մէջ եղած է մասնաճիւղի պասքեթպօլի երէց տղոց խումբի մարզիկ ու խմբապետ: Եղած է նաեւ մարզիչ եւ մասնաճիւղի երկարամեայ վարչական:

Փառատօնէն ետք տեղի ունեցաւ պասքեթպօլի մրցաշարքին երկրորդ մրցումը Հ.Մ.Ը.Մ.-«Նուպար»ի զոյգ կազմերուն (Գահիրէ եւ Աղեքսանդրիա) միջեւ: Մրցումը աւարտեցաւ իր նպաստ Գահիրէի Հ.Մ.Ը.Մ.-«Նուպար»ին՝ 82-51 արդիւնքով:

Այնուհետեւ, «Յառաջդիմասէր»ի գեղատեսիլ պարտէզին մէջ տեղի ունեցաւ ճաշկերոյթ, ներկայութեամբ 200

with the complements of

Restaurant Al-Mayass

Հ.Մ.Ը.Մ.ականներու եւ համակիրներու:

ՊԱՍՔԵԹՊՈԼԻ

ԵՐԿՐՈՐԴ ՄՐՑՈՒՄԸ

ԵՒ 100-ԱՄԵԱԿԻ ՊԱՐԱՀԱՆԴԵՍԸ

Շաբաթ, 8 Սեպտեմբերին, պասքեթպոլի մրցաշարքը շարունակուեցաւ եւ օրուան մրցումը իրարու դէմ հանեց Գահիրէի Հ.Մ.Ը.Մ.-«Նուպար»ը եւ Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ը: Մրցումը աւարտեցաւ 79-47 արդիւնքով, ի նըպաստ Հ.Մ.Ը.Մ.-«Նուպար»ի:

Երեկոյեան ժամը 10.30-ին, յունական «Սոթէրի» ակումբին մէջ տեղի ունեցաւ 100-ամեակի պարահանդէսը: Օրուան երգիչ Մանուկ Մինասեան, երգեհոնի ընկերակցութեամբ Վարդան Մազեանի, մինչեւ արեւածագ ներկաները խանդավառեց հայերէն ու եւրոպական սիրուած երգերով:



ՀՈԳԵՀԱՆԳԻՍԸ

ԵՒ ՊԱՍՔԵԹՊՈԼԻ


ԱՒԱՐՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՄԸ

Կիրակի, 9 Սեպտեմբերի առաւօտեան, Աղեքսանդրիոյ Ս. Պօղոս-Պետրոս եկեղեցւոյ մէջ հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի հիմնադիրներու եւ հին ու նոր ննջեցեալներու յիշատակին:

Երեկոյեան ժամը 7.30-ին, պասքեթպոլի աւարտական մրցումով վարագոյրը իջաւ 100-ամեակի ձեռնարկներուն վրայ: Գահիրէի Հ.Մ.Ը.Մ.-«Նուպար»ը եւ Աղեքսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ը իրարու դէմ ճակատեցան՝ տիրանալու համար Վարդան եւ Հէրի Գազանճեաններուն կողմէ տրամադրուած ախոյեանական բաժակին: Ախոյեանութեան տիրացաւ Գահիրէի Հ.Մ.Ը.Մ.-«Նուպար»ը՝ 84-43 արդիւնքով յաղթելէ ետք Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ին:

ՊԱՏԻՒՍ ԱՐԺԱՆԱՖՈՐԱՑ

ՅՈՒՇԱՄԵՏԱԼՆԵՐՈՒ ԱՐԺԱՆԱՑԱԾ ՔՈՅՐԵՐՆ ՈՒ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ





Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒՄՏԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՄԿԱՌԻՏԱԿԱՆ 6-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՆԱԿՈՒՄԸ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՌԻԹ ՄԸ ԿԸ ՀԱՆԴԻՍԱՄՆԱՅ ՇՐՋԱՆԻ ՄԿԱՌԻՏՆԵՐՈՒՄ



ով: Եղջիւրը հրապարակ բերաւ բանակուծի ամէնէն կրտսեր արծուիկը՝ Հ.Մ.Ը.Մ. Փաստինայի «Ազատամարտ» մասնաճիւղի անդամ քոյր Մեղրի Համբարեանը, ապա ներկայացնելով զայն Ընդհ. Խմբապետուհին՝ երկուքը միասնաբար փչեցին եւ արարողութեան սկիզբը ազդարարեցին:

«Այս եղջիւրին կանչը մինչեւ օրս մեծ նշանակութիւն ունի սկաուտներուն համար: Ան կանչն է բոլոր անոնց, որոնք կը հետեւին սկաուտական շարժումի հիմնադիրին քայլերուն: Ան ըսկաուտութիւնը լաւագոյնս ապրելու կանչն է: Այս տարին յատկանշական է մեզի համար, որովհետեւ հետեւելով սկաուտութեան հիմնադիր Պէյտըն Փաուլըի քայլերուն եւ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներէն Շաւարշ Քրիսեանի ջանքերուն, մենք այսօր կը նշենք հայ սկաուտութեան 100-ամեակը: Յատկա-

Մարտ Բէշիշեան ԼՈՍ ԱՆՃԵԼՍ


10 Օգոստոս 2012-ի երեկոյեան իր փայլուն աւարտին հասաւ Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու սկաուտական 6-րդ ընդհանուր բանակումը, որ վերանորոգման առիթ մը հանդիսացաւ շրջանի սկաուտներուն համար:

Թեքոյա բանակավայրի բնութեան գեղեցկութիւնը եւ մանաւանդ Հ.Մ.Ը.Մ.ական բանակողներու ստեղծագործութիւնները վայելելու փափաքով բանակավայր փութացած էին Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան անդամներ, մասնաճիւղերու վարչութիւններ եւ յատուկ հիւրեր: Հոն էր նաեւ Ամերիկեան Վրրտիկօ Հիլզ Սկաուտական Խորհուրդի նախագահ Տենիս Պարլոնս:

Սկաուտական զուարթ երգ ու կան-

չերով, բանակումի դրօշակներու կայմին առջեւ ուրախութեամբ համախմբուեցան հարիւրաւոր բանակողներ՝ դրօշակի իրենց վերջին պաշտօնական արարողութիւնը կատարելու եւ անգամ մը եւս հաւաքաբար խմբերգելու իրենց հոգեհարազատ սկաուտական քայլերգը:

Բանակումի կազմակերպիչ Սկաուտական Խորհուրդին անունով, բանակումին փակման արարողութիւնը գլխաւորեց եւ հրաժեշտի իր խօսքը փոխանցեց Շրջանային Ընդհանուր Խմբապետուհի քոյր Թալին Հինտոյեան, որ արարողութեան բացումը կատարեց ճիշդ այնպէս, ինչպէս 1907-ի ամրան, սկաուտութեան հիմնադիր Պէյտըն Փաուլը կատարած էր իր փորձ բանակումի ընթացքին՝ բանակողները համախմբելով African antelope the Kudu Horn-



պէս այն կազմակերպութեան, որ հայկական Յեղասպանութենէն մազապուրծ փրկուած որբերը խնամեց եւ ընտանիքի զգացումը փոխանցեց անոնց», ըսաւ քոյր Հինտոյեան եւ ապա ընդգծեց, թէ «բոլորս մէկ ընտանիք ենք՝ հզօր միաւոր մը, որ կ'առաջնորդուի հոգատար քոյր-եղբայրներով, որոնք պարտականութեան գիտակից եւ անկեղծ են իրարու հանդէպ, Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին եւ մեր ազգին հանդէպ»:

«Մեր հարազատ տան՝ Թեքոյա բանակավայրին մէջ իրագործուող Ծ-րդ Շրջանային բանակումին, մենք բարեբախտութիւնը ունեցանք միասին ապրելու, իրարու ծանօթանալու, իրարմէ սորվելու, հարստացնելու մեր սկաուտական եւ ղեկավարման գիտելիքները: Թէեւ երկար ճամբայ կտրեցինք, սակայն դեռ յաղթահարելու բազմաթիւ մարտահրաւէրներ ունինք: Այսուհանդերձ, երախտապարտ ենք մեր անդամներու թափած բոլոր ճիգերուն եւ զոհողութիւններուն համար: Շնորհակալութիւն ձեր բոլորին համբերութեան», եզրակացուց քոյրը եւ մէկ առ մէկ յիշատակելով՝ շնորհակալութիւն յայտնեց Շրջանային Վարչութեան եւ Շրջանային Սկաուտական Խորհուրդի իր գործընկերներուն, ինչպէս նաեւ բոլոր յանձնախումբերուն եւ անհատներուն, որոնք զանազան ձեւերով օգտակար հանդիսացան բանակումի կազմակերպ-



չական, ծրագրաւորման, կարգապահական, շտապ օգնութեան, մատակարարման, խոհարարական եւ դաստիարակչական աշխատանքներու յաջողութեան:

Շրջանային Վարչութեան պատգամը փոխանցեց սկաուտականի ներկայացուցիչ եղբ. Թովմաս Տէօքմէճեան, որ առաջին հերթին շնորհաւորեց բանակումի կազմակերպիչ ու մասնակից արի-արենոյշները, որոնք յաջող բանակում մը ունենալով՝ ոչ միայն նորանոր գիտելիքներ սորվեցան, այլեւ Հ.Մ.Ը.Մ-ական նոր ընկեր-ընկերուհիներ ունեցան: Եղբայրը համոզում յայտնեց, որ բանակողները իրենց նորանոր գիտելիքները պիտի յաջողին փոխանցել իրենց մասնաճիւղերուն, որպէսզի աւելի բազմանան եւ հզօրանան սկաուտական խումբերը:

Այս առիթով իր սրտի խօսքը փոխանցեց Վերտիւկօ Հիլզ Սկաուտական Խորհուրդի նախագահ Տենիս Պարլոնս, որ հիացմունք յայտնելով Հ.Մ.Ը.Մ-ի կազմակերպած բազմամարդ այս բանակումին համար՝ գեղեցիկ օրինակներով խրախուսեց բանակողները, որպէսզի իրենց աշխատանքները կազմակերպեն մտածողութեամբ, սրտանց եւ հաւատքով:


Իմաստալից այս պատգամներէն ետք տեղի ունեցաւ հերթապահներու փոխանցում եւ

բանակումի վերջին գիշերուան ծրագրի ներկայացում: Յայտարարուեցան նաեւ բանակողներու ամէնօրեայ եւ ապա՝ ընդհանուր դասաւորման ու վրաններու քննութեան այնքան սպասած արդիւնքները: Երկու բաժանումներուն մէջ ալ յաղթական յայտարարուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Կլէնտէյլի «Արարատ» մասնաճիւղը: Գայլիկ-արծուիկներու բաժինին մէջ առաջին հանդիսացաւ թիւ 103 («Կապոյտ») խմբակը, իսկ արի-արենոյշներու բաժինին մէջ՝ թիւ 59 («Բագէ») խմբակը:

Արարողութիւնը եզրափակուեցաւ դրօշակի տպաւորիչ արարողութեամբ: Բանակումի դրօշակակիրներու խումբը դրօշակներու կայմին վրայ ծածանող Մ. Նահանգներու, Հայաստանի, Արցախի, Գալիֆորնիոյ, Հ.Մ.Ը.Մ-ի եւ բանակումի դրօշները ակամայ վար բերին: Արարողութիւնը եզրափակուեցաւ «Ով Հայ Արի» սկաուտական քայլերգով:

Յիշատակի նկարներ առնելէ ետք, բանակողները միասնաբար ընթրեցին եւ երեկոն աւարտեցին հաճելի խարուկահանդէսով:

Շաբաթ, 11 Օգոստոսի առաւօտեան տխուր էր բանակավայրը: Ամբողջ մէկ շաբաթ փոքրիկ Հայաստանի վերածւած բնութեան հրաշագեղ այդ վայրը լուսութեան պիտի մատնուէր: Մէկ առ մէկ վար առնուեցան հարազատ տան դեր կատարած վրանները, քանդուեցան գեղեցիկ ձեռային աշխատանքներն ու դրօշներու հսկայական կայմը: Երկար ու ամուր շղթայ բռնած բանակողները






յուզումնախառն արցունքներով խմբերգեցին ցտեսութեան երգը:

Չորս տարին անգամ մը կազմակերպուող շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի 6-րդ այս բանակումը սկիզբ առած էր Կիրակի, 5 Օգոստոս 2012-ի առաւօտեան, շրջանի արի-արենոյձներու մասնակցութեամբ:

Չորեքշաբթի, 8 Օգոստոս 2012-ին, բանակողներուն միացած էին շրջանի գայլիկ-արծուիկները: Եզակի այս բանակումին շրջանի 15 մասնաճիւղերէն մասնակցած էին աւելի քան 500 բանակողներ:

Ամէնօրեայ զարթնումի, մարզանքի, վրաններու մաքրութեան, դրօշակի արարողութիւններու ծրագիրներէն բացի, բանակումին ընթացքին տարիքային դասաւորումներով, խմբակներու բաժնուած, բանակողներուն հրամցուեցան տեսական եւ գործնական օգտաշատ դասախօսութիւններ: Անոնք կ'ընդգրկէին սկառտական, ընկերային, պատմական, Հայ Դատի, հայոց



պատմութեան, գիտական, արուեստի, ստեղծագործական եւ ընկերային նիւթեր, որոնք մեծ հետաքրքրութիւն ստեղծելով բանակողներուն մօտ՝ ընդարձակեցին անոնց մտային հորիզոնները:


Ընկերային գետնի վրայ, օրուան ընթացքին բանակողները ապրեցան հաճելի պահեր, որոնց ընթացքին անոնք զբաղեցան մարզական մրցումներով, ըս-

կառուտական եւ հաճելի այլ խաղերով, նետաձգութեամբ, լողով, ձեռային աշխատանքներով եւ խարուկահանդէսի պատրաստութեամբ:

Բանակումներու ամէնէն գեղեցիկ ու հաճելի պահերը խարուկահանդէսներն են, որոնք բանակողներուն ընկերային հաճելի պահեր տրամադրելէ աւելի, գեղեցիկ առիթ կը հանդիսանան բացայայտելու անոնց թաքուն ձիրքերը: Այս բանակումին, ամէն գիշեր քանի մը մասնաճիւղերու կը վըստահուէր բանակումի առօրեայ աշխատանքները եզրափակող այս ձեռնարկը, որուն ընթացքին բոցավառող խարոյկին շուրջ կը ներկայացուէին բացառիկ ծրագիրներ:

Շաբթուան մը վրայ երկարած եւ բազմահարիւր արի-արենոյձներ եւ գայլիկ-արծուիկներ համախմբած այս բանակումը անմոռանալի յիշատակներ դրոշմեց մասնակիցներու սիրտերուն մէջ, ինչ որ մղիչ ուժ պիտի հանդիսանայ անոնց ապագայ միութենական գործունէութեան:

«Ցտեսութիւն մըն է եղբարք, միայն ցտեսութիւն»:



Elegance Plus

Shoes, Bags, Fashion Accessories & Gift Items

Bourj Hammoud - Dora - Armenia Street - Boyadjian Bldg. Beirut - Lebanon
Tel. : 00961-1-248554, Fax : 00961-1-248556
Mob.: 00961-3-882811 - 00961-3-882812
E-mail: hratch@goldenmountains.com
hratchboy@hotmail.com

H. N. BOYADJIAN & CO.

ՖՐԵՋՆՈՅԻ «ՄԱՍՈՒՆ» ՄԱՍՆԱԾԻՂԻ ԳԱՅԼԻԿ-ԱՐԾՈՒԻԿՆԵՐՈՒ ԲԱՆԱԿՈՒՄԸ

Սարգիս Փանոսեան
ՖՐԵՋՆՈ

Մ-Ը-Մ-ի Ֆրեզնոյի «Մասուն» մասնաճիւղի խումբապետական կազմին կազմակերպութեամբ, 14-16 Սեպտեմբերին տեղի ունեցաւ գայլիկ-արծուիկներու եռօրեայ բանակումը, Մլրբթըն լիճի ափին, ընկերակցութեամբ սկաուտ եղբայրներու:

Ուրբաթ, 14 Սեպտեմբերի յետմիջօրէին, 30 գայլիկ, արծուիկ եւ սկաուտ եղբայրներ ու քոյրեր, իրենց խմբապետական կազմին հետ, մեկնեցան դէպի Մլրբթըն լիճ: Ծնողներ եւ բարեկամներ եկած էին «Բարի ճանապարհ» ըսելու իրենց զաւակներուն, որոնք ուրախութեամբ «Մնաք բարով» ըսելով ինքնաշարժներ ուղղուեցան՝ դէպի 41 ազատուղին: Ծնողներն ու բարեկամները վերադարձան իրենց տուները, կրկին ամալացնելով ակումբին բակը:

Խմբապետական կազմի անդամները կը պատմեն. «Ուրբաթ օր, երբ հասանք լիճին ափը, սկսանք վրանները լարելու, մինչ սկաուտ եղբայրները դրօշակի ձողը պատրաստեցին: Երեկոյեան, ընթրի-



քէն ետք, տեղի ունեցաւ կարեւոր եւ հետաքրքրական դասախօսութիւն մը: Փօլ Սարմազեան գեղեցիկ եւ բոլորին մատչելի ձեւով ներկայացուց իր նիւթը՝ «Պահակութիւն եւ դիշերային խաղեր»: Դասախօսութեան յաջորդեցին «կրակ վառել»ու փորձեր, կանչեր, երգեր, խաղեր եւ յաջորդ օրուան խարուկահանդէսի պատրաստութիւն: Ժամը 11-ին կրակմար յայտարարուեցաւ եւ ամէն մարդ գնաց իր վրանը՝ քնանալու: Արթուն էին միայն սկաուտները, որոնք հերթականութեամբ պահակութիւն կը կատարէին: Պահակութիւն կատարեցին նաեւ գայլիկները, որպէս առաջին փորձ՝ ժամը 11-12 եւ առաւօտեան ժամը

6-7, հսկողութեամբ մեծ սկաուտներու»:

Խմբապետական կազմէն քոյր կարինէն ըսաւ. «Իրապէս հաճելի գիշեր մը անցուցինք բնութեան ծոցին մէջ: Շաբաթ օր, երբ վարթնումի ժամը հնչեց, ժամը 7-ին, բոլորը կազմ ու պատրաստ վրաններէն դուրս ելան եւ սկսանք մեր յայտագիրը՝ մարզանք, նախաճաշ, դրօշակի արարողութիւն, ապա այցելութիւն լիճ, ուր գայլիկները լողացին, իսկ երէց սկաուտ եղբայրները ձեռային աշխատանքով նաւակ մը պատրաստեցին եւ անոր վրայ բարձրանալով լիճին դիմացի ափը անցան: Վերադարձին, անոնք ծափահարութիւններով եւ կանչերով դիմաւորուեցան լիճի ափին սպասող գայլիկներու եւ մրջնիկներու կողմէ: Լիճէն վերադարձին, տեղի ունեցաւ դասախօսութիւն: Աքելլա քոյր Լիսա Փանոսեան խօսեցաւ Հ-Մ-Ը-Մ-ի հիմնադիրներուն եւ անոնց սկզբնական կազմակերպչական գործունէութեան մասին: Երեկոյեան, ծնողները բանակավայր այցելեցին եւ ներկայ գտնուեցան դրօշակի արարողութեան, որուն ընթացքին երկու սկաուտներ իրենց խօստումը կատարեցին, նաեւ՝ անոնք բանակումի ընթացքին իրենց կեցուածքով եւ գործունէութեամբ լաւագոյնը հանդիսացան եւ անոնց յանձնուեցան յա-






տուկ հաստատագիրներ: Գայլիկներու վոհմակին լաւագոյն եղբայրն էր Հրայր Քէրքէզեան, իսկ արծուիկներու երամինը՝ Քնար Շաքարեան եւ Արլէն Փիլաւեան:

«Օրուան խարուկավարն էր քոյր Սուէ Գնտոյեան: Ան գեղեցիկ կերպով եւ մեծ վստահութեամբ վարեց խարուկահանդէսին յայտագիրը, որուն ընթացքին գործադրուեցաւ կոկիկ յայտագիր մը, երգերով, կանչերով եւ սկառուտական զանազան խաղերով: Յայտագիրը վերջացաւ «Ցտեսութիւն» երգով, որ խանդավառ կերպով երգուեցաւ բանակողներուն կողմէ, թնդացնելով ծառաստանն ու բանակավայրը: Ուշ գիշերին, ուրախ տրամադրութեամբ եւ յոգնած, բոլոր եղբայրներն ու քոյրերը մտան իրենց վրանները եւ քնացան:

«Կիրակի առաւօտեան, կանուխ ժամերուն, բանակավայրի պահակները



իրարանցումի մէջ են: Անոնք կը նշմարեն ինքնաշարժի լոյս մը, որ դէպի բանակավայրին կեդրոնական դուռը կու գայ: Անոնք անմիջապէս պաշտպանողականի կ'անցնին եւ թոյլ չեն տար, որ

յարձակողներու խումբը մօտենայ: Ինչպէս վերջը իմացանք, երբ մենք մեկնումի կը պարաստուէինք, ծնողներ եւ հին Հ.Մ.Ը.Մ.ականներ էին, որոնք եկած էին բանակավայրին դրօշակը փախցնելու, սակայն մեր սկառուտները թոյլ չտուին, որ անոնք բանակավայր մօտենան»:

Ապրիլի խմբապետական կազմի պատասխանատուներ, ապրիլի գայլիկ եւ մրջնիկ քոյրեր ու եղբայրներ, ինչպէս ձեր երէց ըսկառու եղբայրները թոյլ չտուին եւ պաշտպանեցին իրենց դրօշակը, դուք ալ այդ դրօշակին ձողին շուրջ հասակ առէք եւ պաշտպանեցէք ձեր ինքնութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքի հովանիին տակ, հայօրէն ապրելու եւ ապագային հայօրէն գործելու համար: Սիրելի քոյրեր եւ եղբայրներ, չէ՞ որ «Մենք, միայն մենք Արարատ ունենք»:

'Made from one single slice of natural Australian opal'

Classique

OPAL DIAL WATCH

Sarkis Der Bedrossian

Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.
123 Clarence Street
Sydney 2000
Australia

Phone: +61 2 9290 2199
fax: +61 2 9262 1630
Website: www.classiquewatches.com
Email: Info@classiquewatches.com

Հ.Մ.Ը.Մ.Ի ՓԱՍԱՏԻՆԱՅԻ «ԱԶԱՏԱՄԱՐՏ» ՄԱՍՆԱԾԻՂԻ 35-ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍԱԲՈՐ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Մարո Քէշիշեան
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

Շաբաթ, 13 Հոկտեմբերի երեկոյեան, Փասատինայի Հայ Կեդրոնը աննախընթաց ուրախ մրթնուրրտի մը մէջ կը գտնուէր: Երջանի Հ.Մ.Ը.Մ.ասէր հասարակութիւնը հաւաքուած էր տօնախմբելու 35-ամեակը այն մասնաճիւղին, որ կարողացած էր սկառուտական եւ մարզական իր շարքերուն ընդմէջէն մէկ դրօշի տակ համախմբել շրջանի երիտասարդութիւնը, ազգային գիտակցութիւն եւ հայրենասիրութիւնը դրոշմելով անոնց էութեան մէջ: Հոն էին շրջանի Ս. Սարգիս եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Խորէն Քհնյ. Պապոշեան, Հ.Մ.Ը.Մ.ի Երջանային Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Աբրահամեան, մասնաճիւղի մօտ Երջանային Վարչութեան կապ թոյր Նորա Չափարեան եւ Երջանային Վարչութեան անդամ եղբայրներ Ալէք Արարատեան եւ Բաֆֆի Յնծայեան, Հ.Յ.Դ. «Լեռնավայր» կոմիտէութեան եւ ՀՕՄ-ի «Սօսէ» մասնաճիւղի ներկայացուցիչներ, համակիրներ, հիւրեր եւ բազմաթիւ Հ.Մ.Ը.Մ.ականներ: Ակնյայտ էր մասնաճիւղի անցեալի

եւ ներկայի խմբապետ խմբապետուհիներու, մարզիկ-մարզիկուհիներու եւ մարզիչներու տիրական ներկայութիւնը: Ձեռնարկը նաեւ վերահանդիպման գեղեցիկ առիթ մըն էր բոլորին:

Ժամը 8-ին սկիզբ առաւ տօնախմբութիւնը: Աւելի քան 300 մասնակիցներ, սրահի մուտքին յիշատակի նկարներ առնելէ եւ գեղեցկօրէն կազմակերպուած լուս. աճուրդին հետեւելէ ետք, սրահ մուտք գործեցին եւ առաջնորդուեցան իրենց տեղերը:


Ձեռնարկին հանդիսավարութիւնը ձեռնհասօրէն կատարեց մասնաճիւղի սկառուտական շարքերուն մէջ հասակներու եւ մինչեւ մասնաճիւղի խմբապետի պաշտօնին արժանացած եղբ. Սեւակ Կարապետեան: Նախքան պաշտօնական յայտագիրին սկսիլը, եղբայրը ներկաները հրաւիրեց յոտնկայս յարգելու յիշատակը այս կեանքին հրաժեշտ տուած Հ.Մ.Ը.Մ.ականներուն եւ ապա, ողջունելով ներկաները, իր հպարտանքը յայտնեց 35-ամեակի ձեռնարկին առիթով Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին եւ Փա-



Քոյր Սիրան Մարսելեան
եւ եղբ. Սեւակ Կարապետեան:

սատինայի գաղութին դիմաց իրրեւ խօսնակ ներկայանալուն համար: Նախկին սկառուտը նաեւ հպարտանք յայտնեց իրեն վստահուած վարչական, սկառուտական եւ մարզական պաշտօններուն եւ պատասխանատուութիւններուն համար: Ան բարձր գնահատելով մասնաճիւղի նուիրեալ ու հեռատես անդամներուն ճիգերը, որոնք արդիւնաւորուեցան մասնաճիւղը սեփական մարզադաշտով մը օժտելու երազին իրականացումով, վստահեցուց, որ միասնական ջանքերով նորանոր նպատակներ պիտի իրագործուին:

Ապա, ան բեմը յանձնեց մասնաճիւղի ատենապետ եղբ. Պերճ Պետոյեանին, որ Հ.Մ.Ը.Մ.ի «Ազատամարտ» մասնաճիւղի հիմնադրութեան 35-ամեակը յաղթանակի թուական բնորոշելով, ընդգծեց. «Այս միութիւնը, ճակատաբաց, տակաւին տասնամեակներ պիտի կերտէ եւ պիտի շարունակէ մեր սրբա-



Տէր եւ տիկ. Գէորգ եւ Սօսի Սէմէրճեաններ:



35-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԵԱՆ ՄՈՄԱՎԱԹՆԵՐԸ

- Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութիւն
- Հ.Յ.Դ. «Լեռնավայր» Կոմիտե
- ՀՕՄ-ի «Սօստ» Մասնաճիւղ
- Տէր եւ Տիկ. Թոնի Ագեան
- Մի ոմն
- Տէր եւ տիկ. Վարդան Անտոնեան
- Տէր եւ տիկ. Ժիրայր Պաղպուտարեան
- Թալին եւ Դենիֆըր Պաղտատլեան
- Տէր եւ տիկ. Ծօ Պաղտատլեան
- Տէր եւ տիկ. Պերճ Պետոյեան
- Տէր եւ տիկ. Յովիկ Պէտեանիլեան
- China Pearl Inc.
- Տէր եւ տիկ. Սարգիս Կարապետեան
- Տէր եւ տիկ. Յակոբ Ղազարեան
- Տէր եւ տիկ. Պերճ Կուրտիկեան
- Տիկ. Մակի Իլանճեան
- Տէր եւ տիկ. Բաֆֆի Յարութիւնեան
- Օրդ. Փերուզ Յարութիւնեան
- Օրդ. Տէյի Իվոն/California Real Estate Inc.
- Տէր եւ տիկ. Շահէ Գաբրիէլեան
- Տէր եւ տիկ. Արթուր Գարձեան
- Տէր եւ տիկ. Մերուժան Կիտցիմեան
- Տէր եւ տիկ. Վիգէն Լապպատ
- Տէր եւ տիկ. Վահէ Մաճառեան
- Տէր եւ տիկ. Գէորգ Մանուկեան
- Տէր եւ տիկ. Թոնի Մարկանեան
- Տէր եւ տիկ. Մանուէլ Մարսէլեան
- Պրն. Աւօ Նալպանտեան
- Տէր եւ տիկ. Ժագ Նազարեան
- Տէր եւ տիկ. Սարգիս Նուրեան
- Տէր եւ տիկ. Սարգիս Թաթիկեան
- Պրն. Ժիրօ Թաթիկեան
- Տէր եւ տիկ. Արա Չաղլասեան
- Տէր եւ տիկ. Մայք Չոլաքեան
- Տէր եւ տիկ. Երուանդ Վարդանեան
- Տէր եւ տիկ. Հրատ Եագուպեան
- Zephyr Coffee House

զան գործը: Անցնող 3.5 տասնամեակներուն, շնորհիւ մեր բոլոր անդամներուն, սկաուտական կարգերուն, մարզիկներուն, մարզիչներուն, օժանդակ մարմիններուն, համակիրներուն, բարեկամներուն ու բարերարներուն անսակարկ նուիրումին եւ զօրակցութեան կարողացանք բոլոր դժուարութիւնները յաղթահարել»:

Հաւաստիացնելով, թէ «Առաջնորդները չեն ծնիր, այլ կը պատրաստուին», Պետոյեան հրաւիրեց ներկայ ծնողները միանալու Հ.Մ.Ը.Մ-ի շարքերուն, միասնաբար դաստիարակելու համար իրենց հոգածութեան յանձնուած սերունդները, իսկ նոր սերունդին կոչ ուղղեց վերադառնալու իրենց արմատներուն, որպէսզի իրականացնեն իրենց պապերուն երազը, Հ.Մ.Ը.Մ-ը առաջնորդելու դէպի նոր բարձունքներ:

Եզրափակելով, եղբ. Պետոյեան վարչութեան անունով շնորհակալութիւն յայտնեց մասնաճիւղին միշտ զօրակցող Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութեան, Հ.Յ.Դ. «Լեռնավայր» կոմիտէի ղեկավարին, ձեռնարկի հովանաւորներուն, մոմավառներուն, ներկայներուն եւ կազ-



Եղբ. Գառնիկ Աբրահամեան, քոյր Սիմա Կարապետեան եւ եղբ. Պերճ Պետոյեան:

մակերպիչ յանձնախումբին, չմոռնալով Խաչիկեան ամուլը, որոնք իրենց իշխանական նուիրատուութեամբ, սեփական մարզադաշտով մը օժտեցին կեդրոնը:

Այնուհետեւ, ան բեմ հրաւիրեց քոյր Նորա Չափարեանը, որ շնորհաւորական յուշատախտակ մը յանձնեց մասնաճիւղի ատենապետին, առ ի գնահատանք մասնաճիւղի 35 տարիներու բեղուն գործունէութեան եւ անդամ-անդամուհիներու անխոնջ ու անսակարկ նուիրումին:

Գնահատագրի յանձնումէն ետք, ընթրիքի սեղանները օրհնեց եւ մասնաճիւղին բարի երթ մաղթեց Խորէն Քհնյ-Պապոշեան: Մինչ ներկայները կը ճաշակէին հրամցուած համադամ ճաշերը, միւս կողմէ կը ցուցադրուէր մասնաճիւղի 35 տարիներու բեղուն գործունէութիւնը ներկայացնող տեսերիզը:

Ընթրիքէն ետք տեղի ունեցաւ պարագեատրման արարողութիւն, զոր տպաւորիչ կերպով վարեց ձեռնարկի կազմակերպիչ յանձնախումբի ատենապետուհի քոյր Սիրան Մարսէլեան: Չորս Հ.Մ.Ը.Մ-ականներ պարգեատրուեցան մասնաճիւղէն ներս տարած իրենց նուիրեալ գործունէութեան համար: Պարգեատրեալներուն կենսագրական գիծերը ներկայացուելէ ետք (տեսնել



առանձին), քոյր Մարսելեան բեմ հրա-
ւիրեց զանոնք՝ ստանձնելու իրենց գնա-
հատագիրները:

Իր երկար տարիներու անսակարկ
նուիրումին եւ մասնաճիւղի վերելքին
բերած նպաստին իբրեւ երախտագի-
տութիւն, մասնաճիւղի 35-ամեակի պա-
տուռոյ անդամ յայտարարուեցաւ քոյր
Սիմա Կարապետեան: Համապատաս-
խան յուշատախտակը յանձնեց մասնա-
ճիւղի ատենապետ եղբ. Պերճ Պետոյ-
եան, ընկերակցութեամբ Շրջանային
Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ
Աբրահամեանին:

Պարգեւատրուեցան նաեւ մասնա-
ճիւղէն ներս երկար տարիներ մարզիչի
պատասխանատուութիւնը բժախնդ-
րութեամբ կատարած եղբայրներ Ճէք
Նազարեան, Պերճ Կուրտիքեան եւ Էտի
Մարտիրոսեան, որոնց յուշատախտակ-
ները յանձնեց մասնաճիւղի վարչու-
թեան մարզական պատասխանատու
քոյր Անիթա Տէրտէրեան, ընկերակցու-
թեամբ մասնաճիւղի ատենապետին:

Այնուհետեւ, տեղի ունեցաւ մասնա-
ճիւղի 35 տարիներու բեզուն գործունէ-
ութիւնը արժեւորող մոմափառու-
թիւնը: Մոմերը նախապէս տեղադրու-
ած էին սեղաններուն վրայ, որոնք
մէկ առ մէկ վառեցան, իւրաքանչիւր
մոմափառի անունը յայտարարուելէ
ետք:

Պաշտօնական յայտագիրի աւարտէն
ետք, երեկոն խանդավառեց երգիչ Ժո-
զէֆ Գրիգորեան՝ իր նուագախումբին
ընկերակցութեամբ: Հրամցուած հայ-
կական եւ միջազգային երգերով, ինչ-
պէս նաեւ հայկական շուրջպարերու
եղանակներով մեծ խանդավառութիւն
ստեղծուեցաւ սրահէն ներս: Ուրախ
միջնորդութեամբ իր գազաթնակէտին հասաւ
երգիչին հրամցուցած ազգային-յեղա-
փոխական երգերով:

Տօնակատարութեան ընթացքին ու-
րախութեամբ յայտարարուեցաւ, թէ
մասնաճիւղի երկարամեայ եւ հաւատա-
ւոր անդամներէն տէր եւ տիկ. Գէորգ
եւ Սօսի Սէմէրճեաններ տասը հազար
տոլար կը նուիրեն առ ի գորակցութիւն
մասնաճիւղի հզօրացման աշխատանք-
ներուն:

ՃԱՆՉՆԱՆՔ

35-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐԵԱԼ ՔՈՅՐ-ԵՂԲԱՅՐՆԵՐԸ

● **ՍԻՄԱ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ.** - Ծը-
նած է Պէյրութ, Լիբանան: 1963-ին
անդամակցած է Հ.Մ.Ը.Մ.ին, իբրեւ
արեւոյշ եւ հասած է մինչեւ գայլիկ
խմբապետի պաշտօնին: 1978-ին
մասնակցած է համա-Հ.Մ.Ը.Մ.-
ական առաջին ընդհանուր բանա-
կումին, Աթէնքի մէջ: 1989-ին, Մ.
Նահանգներ հաստատուելով միա-
ցած է Փասատինայի «Ազատա-
մարտ» մասնաճիւղին, ուր ստանձնած է
պատասխանատու զանազան
պաշտօններ: Ան ծնողական յանձնախումբի
եւ մասնաճիւղի վարչութեան
անդամ է, վարչութեան ներկայացուցիչ՝
քոյր կազմակերպութիւններու մօտ:



1991-ին արժանացած է ամերիկեան սկաուտութեան Wood Bedg-ին: Մաս
կազմած է Շրջանային Վարչութեան զանազան յանձնախումբերուն. Նաւա-
սարդեան, Յաղթանակի պարահանդէս, Նաւասարդեան փառատօն, Թերոյա
բանակավայր եւ այլն: Եղած է շրջանի Ս. Սարգիս եկեղեցւոյ տիկնանց օժան-
դակ մարմնի անդամ: Միշտ պատրաստ եղած է օգտակար հանդիսանալու
ազգանպաստ աշխատանքներուն, թէ նիւթապէս եւ թէ բարոյապէս:

● **ՃԷՔ ՂԱԶԱՐԵԱՆ.** - Երեք տասնամեակէ աւելի անդամ է Փասատինա-
յի «Ազատամարտ» մասնաճիւղին, նախ իբրեւ մարզիկ եւ ապա՝ մարզիչ:
Օրինակելի Հ.Մ.Ը.Մ.ական մըն է, որ միշտ կը բաջալերէ իր մասնաճիւղը
նիւթապէս եւ բարոյապէս: Տարիներու ընթացքին գործած վարչական կազ-
մերուն հետ ան գործակցած է համբերութեամբ: Հանդարտութեամբ կատա-
րած է մարզիչի իր պարտականութիւնները՝ պատրաստելով տիպար եւ
ճկուն մարզիկներ:

● **ՊԵՐՃ ԿՈՒՐՏԻՔԵԱՆ.** - 1980-ին, իբրեւ մարզիկ անդամակցած է Փա-
սատինայի «Ազատամարտ» մասնաճիւղին: Ապա, ստանձնելով մարզիչի
պարտականութիւնը, մարզած է բազմաթիւ խումբեր: Ներկայիս ան կը շա-
րունակէ մարզել պասքեթպոլի մէկէ աւելի խումբեր: Կուրտիքեան լրջօրէն
կը կատարէ իրեն վստահուած աշխատանքները, պատրաստելով պասքեթ-
պոլի լաւ մարզիկներ: Ան միշտ ներկայութիւն է մասնաճիւղային աշխա-
տանքներու մէջ եւ յաճախ կ'օգնէ վարչութեան, «Ազատամարտ»ի խումբե-
րը զբաղ պահելու գործին մէջ:

● **ՔՏԻ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ.** - Փոքր տարիքէն մասնակցած է Փասատինայի
«Ազատամարտ» մասնաճիւղի աշխատանքներուն, որուն վարչականներէն
եղած է ան: Իբրեւ մարզիկ, եօթը տարեկանին անդամակցած է մասնաճիւ-
ղին: Եղբ. Էտի հասակ նետած է «Ազատամարտ»ի շարքերուն մէջ եւ եղած
է փնտռուած մարզիկ ու մարզիչ: 2005-ին եւ 2009-ին ան եղած է օգնական
մարզիչը Արեւմտեան Միացեալ Նահանգներու պասքեթպոլի հաւաքական
խումբին: Մինչեւ օրս ան կը մարզէ պասքեթպոլի քանի մը խումբեր:



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԼԷՆՏԵՅԼԻ «ԱՐԱՐԱՏ» ՄԱՍՆԱԾԻԻՂԻՆ ՄԷՋ

Մասնաճիւղի Վարչութիւն ԿԼԷՆՏԵՅԼ

Հ.Մ.Ը.Մ.Ի Կլէնտէյլի «Արարատ» մասնաճիւղին եւ «Woodbury» համալսարանին նախաձեռնութեամբ, ANCA-PN-ի համագործակցութեամբ, 29 Սեպտեմբերին, «Woodbury» համալսարանի «Fletcher Jones» հիմնադրամի լսարանում կայացաւ «Elevate 2012» առաջնորդութեան զարգացում (Leadership Development) համագումարը:

Ծրագիրը վարեց Սեւադա Հեմելեանսը: Նա համառօտ բացատրեց ծրագրի բովանդակութեան մասին եւ ներկայացրեց օրուան բարձրաստիճան հիւրերին՝ ըստ հետեւեալի- Գալիֆորնիոյ նահանգի ծերակուտական Քերոլ Լիուի ներկայացուցիչ Նարինէ Գարագաշեան, քոնկրէսի անդամ Էտրմ Շիֆ, նահանգի վերահսկիչ Ճան Չիանկ, նշեալ համալսարանի տնօրէն դոկտ. Լուիս Քալիանօ, Արեւմտեան Մ. Նահանգներու Հայ Դատի յանձնախումբի համաատենապետ Նորա Յովսէփեան, ՀՕՄ-ի Արեւմտեան շրջանի ատենապետ Լենա Պոզոյեան, Կլէնտէյլի միացեալ կրթաշրջանի վարչութեան անդամ Կրէկ Գրիգորեան եւ Գալիֆորնիոյ «Լուիսերն» համալսարանի դասախօս դոկտ. Սիլվա Գարայեան:

Այնուհետեւ, ներկաներին բարի գալստեան խօսք ուղղեց Փօլ Տեքըրը, ով կազմակերպիչ յանձնախմբի եւ «Woodbury» համալսարանի աշխատանքների համադրողն էր:

Ապա բեմ հրաւիրուեց օրուան առաջին բանախօսը՝ դոկտ. Լուիս Քալիանօն: Նա իր բանախօսութեան ընթաց-

քում, անդրադառնալով յաջող առաջնորդների վարուելակերպին, բացատրեց, թէ ինչպէ՛ս են նրանք ընկալում իրենց ղեկավարման դերը եւ արժէքային ի՞նչ համակարգ են օգտագործում աշխատավայրում: Ըստ նրա, ղեկավարներն առաջնորդում են ոչ թէ հարցերին պատասխանելով, այլ՝ պատասխանները հարցաքննելով:

Այնուհետեւ առիթ տրուեց քոնկրէսի անդամ Էտրմ Շիֆին, ով բարձր գնահատեց համագումարի կազմակերպման գաղափարը: Նա իր կարճ ելոյթում ներկաներին փոխանցեց իր հօր այս խօսքը. «Եթէ դու ինչ որ ասպարէզում հմուտ ես, ապա քեզ համար միշտ պահանջարկ կը լինի»: Նա իր խօսքի աւարտին պատուոյ գիր յանձնեց պատուոյ հիւրին՝ Տայանա Մակպայեանին:

Ապա բեմ հրաւիրուեց «Գորտոպա» շինարարական ընկերութեան փոխ նախագահ Մարիա Մեհրանեանը: Նա ղեկավարում է նշուած ընկերութեան քաղաքային եւ փոխադրական ծրագրաւորման բաժինը: Նա ներկաների հետ կիսեց իր ասպարէզում ունեցած յաջողութիւնները եւ ներկայացրեց դրանց հասնելու իր տարած աշխատանքները: Ըստ Մարիա Մեհրանեանի՝ ղեկավարելը երկկողմանի բնոյթ ունի, որտեղ մէկ ձեռքով օգնութիւն ես վերցնում, իսկ միւսով օգնութիւն ես առաջարկում:

Ապա խօսքը տրուեց Կլէնտէյլի քաղաքապետարանի գործակատար Արտաշէս Քասախեանին, ով ներկայացրեց մեծ կայսրութիւնների եւ ընկերութիւնների յաջողութիւնների օրինակը, որոնք շարունակել են գոյատեւել եւ յաջողու-



թիւններ ամրագրել անգամ իրենց գերագոյն առաջնորդների մահից յետոյ: Ըստ Քասախեանի, առաջնորդութիւնը վեր է մտքի կարողութիւններից եւ չի սահմանափակում անհատական քաջողականութեամբ:

Նախքան կարճ ընդմիջումը, բեմ հրաւիրուեց յաջորդ բանախօսը՝ Ճան Չիանկը: Ըստ Չիանկի, հարկ է իւրաքանչիւր անհատ իր ամենալաւը ներդնի, լսի մարդու կարիքները եւ արդիւնքում կը յաջողի աշխարհը փոխել: Նա եւս պատուոյ գիր յանձնեց պատուոյ հիւր Տայանա Մակպայեանին:

Կարճ դադարից յետոյ բեմ հրաւիրուեց մարտարուեստի (MMA) անուանի մարզիչ եւ GFC մարզադահլիճի հիմնադիր Էտմոնտ Թարվերդեանը: Ըստ Թարվերդեանի՝ ախոյեանը պիտի ունենայ դրական լիցք, լինի աշխատասէր եւ արդիւնքի հասնելու համար ժամանակ չխնայի: Նա ներկայացրեց դահլիճում ներկայ իր մարզիկներին եւ ասաց, որ առաջին հերթին նրանք սովորում են լինել խոնարհ:

Այնուհետեւ բեմ հրաւիրուեց «Հոմ Օրկընայզըրզ» ընկերութեան գլխաւոր տնօրէն եւ նախագահ Ֆրանք Մելքոն-

եանր: Խօսելով իր կիրառած մեթոդների մասին, ան հիմնը-լեց այն փաստին, որ առաջնորդին անհրաժեշտ է ունենալ տիպար, որովհետեւ այն դառնում է պատկան ընկերության ձեռագիրը, որով առանձնանում է շուկայում: Ըստ Մելքոնեանի, յաջողութիւնը կայանում է նրանում, որ մարդը պատրաստ է դիմաւորել առիթները:

Վերջին բանախօսից յետոյ, կազմակերպիչ յանձնախմբի անդամ Սթիւ Արթինեանը համառօտ ներկայացրեց օրուան պատուոյ հիւրին՝ «Hollyscoop» ծրագրի ժամանցային լրագրող եւ հիւրընկալող Տայանա Մակպապեան-Մետիսընի կենսագրութիւնը: Նա աւելացրեց, որ Տայանան տարիներ առաջ սիրողաբար աշխատանք է տարել Հ.Մ.Ը.Մ-ի համար եւ իր հեռուստատեսային ասպարէզը սկսել է «Արարատ»ի յարկին տակ:

Նա ասաց, թէ յաջող առաջնորդ լի-






նելու համար հարկ է ունենալ լաւ խմբակ, եւ իրեն այդ հարցում օժանդակել են իր ծնողները, ամուսինը եւ երկու ընկերուհիները: Նա ասաց, որ իւրաքանչիւր անհատ պիտի հետեւի իր երազանքին, բայց ոչ թէ տարուի դրանցով:

Վերջում, հանդէս եկաւ կազմակերպիչ յանձնախմբի անդամ Արմոնտ Աղախանեանը եւ շնորհակալական խօսք ուղղեց օրուան բանախօսներին, պատուոյ հիւրերին, օժանդակող ան-

հատներին եւ ներկաներին: Նա նաեւ յայտարարեց, որ համագումարից յետոյ, համագումարին ներկայ աշակերտութեան համար կը կայանայ յատուկ շրջագայութիւն՝ համալսարանում:

Հարկ է նշել, որ իւրաքանչիւր բանախօս իր ելույթից յետոյ գնահատագիր ստացաւ Հ.Մ.Ը.Մ-ի Կլէնտէյլի «Արարատ» մասնաճիւղի վարչութեան ատենապետ Հելիկ Իսաղուլեանի կողմից:

Այս համագումարի հանդիսատեսների թիւը մօտաւորապէս 250 էր եւ բարձր է գնահատուում այն փաստը, որ մասնագիտական փորձառութիւնների ու մտքերի փոխանակումից բացի նա առիթ եղաւ մօտիկից ծանօթանալու համայնքի յաջողակ դէմքերի հետ եւ բացայայտման աւելի լայն դռներ բանալու Հ.Մ.Ը.Մ-ի համար:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controlled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



Feel at home, away from home...

Reservations Yerevan
32-38, Hanrabedoutian Street,
Yerevan 375010, Armenia
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
sales@europehotel.am

www.europehotel.am



Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԱՍ ՎԵԿԱՍԻ

«ԱՐԾԱԽ» ՄԱՍՆԱԾԻԻՂԸ ՏՕՆԱԽՄԲԵՑ ԻՐ ՀԻՄՆԱԳԻՐՈՒԹԵԱՆ 15-ԱՄԵԱԿԸ

Թղթակից
ԼԱՍ ՎԵԿԱՍ

Շաբաթ, 13 Հոկտեմբեր 2012-ը պատմական օր մը հանդիսացաւ Լաս Վեկասի Հ.Մ.Ը.Մ.ասէր հասարակութեան համար: Տեղւոյն Հ.Մ.Ը.Մ.ի «Արցախ» մասնաճիւղի հիմնադրութեան 15-ամեակն էր, որ մեծ շուքով նշուեցաւ «Թրոփիքանա» պանդոկի «Փաւիլիոն» սրահին մէջ, ուր համախմբուած էին մեծ թիւով Հ.Մ.Ը.Մ.ականներ եւ համակիրներ՝ հպարտանքը ապրելու Հ.Մ.Ը.Մ.ի այն մասնաճիւղին, որ ամբողջ 15 տարի ներկայութիւն եղաւ Լաս Վեկասի մէջ եւ փորձեց իր շուրջ համախմբել չըջանի երիտասարդութիւնը՝ մարզական եւ սկստական իր շարքերուն ընդմէջէն:

Հոն էին Ս. Կարապետ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Աւետիս Աւագ Քհնյ. Թորոսեան, Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան փոխ ատենապետ եղբ. Փիէր Մանուկեան, տեղւոյն Հ.Յ.Դ. «Իշխան» կոմիտէի, ՀՕՄ-ի «Շուշի» մասնաճիւղի, շրջանի նորակառոյց եկեղեցւոյ հոգաբարձութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի տեղւոյն եւ քոյր մասնաճիւղներու ներկայացուցիչներ, Հ.Մ.Ը.Մ.ականներ, համակիրներ եւ բազմաթիւ հիւրեր:

Ժամը 7-8 ընկերային հաճելի ժամ էր, որմէ ետք մասնակիցները ուրախութեամբ գրաւեցին իրենց տեղերը՝ սկսելու համար օրուան խրատականքը:


Ձեռնարկի կազմակերպիչ յանձնախումբի անունով ներկաները ողջունեց քոյր Հուրի Տարագճեան, որ շնորհակալութիւն յայտնեց ձեռնարկի մասնակիցներուն՝ իրենց քաջալերական մասնակցութեան համար: Ան շրջանի հայու-

թեան անունով հպարտանք յայտնեց տեղւոյն հայկական գաղութի հզօրացման համար, որ օրէ օր կ'ընդարձակուի Հ.Մ.Ը.Մ.ի խտացող շարքերով, ՀՕՄ-ի շաբաթօրեայ վարժարանի աշակերտութեամբ ու ընթացող շինարարական աշխատանքներով: Եզրակացնելով իր խօսքը, Պարոյր Սեւակի գօտեպնդիչ բառերով ան ըսաւ. «Մենք քիչ ենք, սակայն մեզ հայ են ասում: Կա՛նք, պիտի լինե՛նք ու դեռ շատանանք»: Ապա հրաւիրեց ներկաները յոտնկայս ունկնդրելու Մ. Նահանգներու, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգները, զորս նուագեց «Քնար» նուագախումբը:

Սեղանները օրհնեց եւ Հ.Մ.Ը.Մ.ի Լաս Վեկասի «Արցախ» մասնաճիւղին բարի երթ մաղթեց Ս. Կարապետ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Աւետիս Աւագ Քհնյ. Թորոսեան:

Ընթրիքէն ետք գործադրուեցաւ պաշտօնական կարճ ու կոկիկ յայտագիր մը, որուն հանդիսավարութիւնը կատարեց կազմակերպիչ յանձնախումբի ատենապետ եղբ. Վրէժ Թասլաքեան, որ ոչ միայն «Արցախ» մասնաճիւղի հիմնադիրներէն եղած է, այլեւ՝ երկար տարիներ վարած է սկստական շարքերու սկստ խմբապետի պատասխանատու պաշտօնը:

Եղբ. Թասլաքեան առաջին հերթին ներկաները հրաւիրեց յոտնկայս յարգելու յիշատակը մասնաճիւղի այն անդամներուն, որոնք Հ.Մ.Ը.Մ.ականի իրենց պարտականութիւնը կատարած եւ գեղեցիկ յուշեր ձգելով՝ հրաժեշտ տուած էին այս աշխարհին. անոնք էին՝ հիմնադիր անդամներ եղբայրներ Չագ Մսրլեան, Գրիգոր Գասապեան, անցեա-



Մասնաճիւղի հիմնադիր անդամներէն եղբ. Կարո Անթիքաճեան:

լի վարչական եղբ. Երուանդ Տէմիրճեան եւ պասքեթպոլի սիրուած մարզիչ Նարեկ Օգնայեան:

Ապա, Թասլաքեան յատուկ շնորհակալութիւն յայտնեց քոյր անոնց, որոնք անցնող 15-ամեակին օգտակար հանդիսացած են մասնաճիւղի վերելքին: Այս իմաստով ան յատկապէս նշեց եւ բեմ հրաւիրեց քոյր Մարո Քէչիչեանը, եղբ. Սարգիս Մահսէրէճեանը, զոր ներկայացուց դուստրը՝ Արտան, նաեւ՝ եղբայրներ Կարո Անթիքաճեանը, Վազրիկ Մաքարեանը, Արթր Գասարճեանը եւ Հայկ Ադամեանը: Առ ի երախտագիտութիւն, անոնք մասնաճիւղի պատուոյ կնքամայր-կնքահայրերը յայտարարուելով՝ իւրաքանչիւրին յանձնուեցաւ համապատասխան փողկապը, մասնաճիւղի խմբապետուհի քոյր Դալար Տարագճեանի եւ քոյր Միրնա Տէմիրճեանի կողմէ:

Իրեն ընծայուած պատիւին համար շնորհակալական ելոյթ ունեցաւ քոյր Մարո Քէչիչեան, որ շնորհաւորելով օր-

լան ձեռնարկը՝ վստահեցուց, թե այս մասնաճիւղին գոյատեւումը կասկածէ վեր է, այնքան ատեն որ շրջանի հայութիւնը թիկունք կը կանգնի անոր:

Իր սրտի խօսքը փոխանցեց նաեւ մասնաճիւղի հիմնադիր անդամներէն եղբ. Կարօ Անթիքաճեանը, որ շնորհաւորելով մասնաճիւղին 15-ամեակը՝ իր հրճուանքը յայտնեց ղեկավարութիւններու յաղթահարման եւ շրջանէն ներս անոր տիրական ներկայութիւնը ըլլալու ուրախ առիթին համար, ապա կոչ ուղղեց ներկաներուն՝ թե ու թիկունք կանգնելու մասնաճիւղին, որ անկասկած իր աշխատանքով ոչ միայն երիտասարդութիւնը կը համախմբէ իր շուրջ, այլեւ կը նպաստէ անոնց հայեցի դաստիարակութեան:

Եղբ. Վրէժ Թասլաքեան յատուկ շնորհակալութիւն յայտնեց բոլոր ներկաներուն, իրենց զօրակցութեան համար, յատկապէս՝ իր գլխաւորած կազմակերպիչ յանձնախումբի կազմին, որ ջանք չէր խնայած արժանավայել կերպով կազմակերպելու հայապահպանման կարեւոր կեդրոններէն Հ.Մ.Ը.Մ.ի «Արցախ» մասնաճիւղի հիմնադրութեան 15-րդ տարեդարձը: Ներկաներու բուն ծափահարութիւններով ան մէկ առ մէկ ներկայացուց եւ յայտարարեց կազմի անդամներուն անունները՝ եղբ. Վիգէն Սարխանեան, քոյրեր Սիրուն Պետիրեան, Հուրի Տարագճեան, Մարիա Տէմիրճեան, Արշօ Մահսէրէճեան, Ազնիւ Գասամանեան եւ Աննա Գապատեան:

Շրջանային Վարչութեան պատգամը փոխանցեց փոխ ատենապետ եղբ.

Փիէր Մանուկեան: Ան առաջին հերթին շնորհաւորելով մասնաճիւղին տարեդարձը՝ բարձր գնահատեց տասնհինգ տարիներու տքնաջան աշխատանքը, որ սկիզբ առած էր խումբ մը Հ.Մ.Ը.Մ.ականներու եւ համակիրներու կողմէ. «15 վարչական կազմեր, յանձնախումբեր եւ Հ.Մ.Ը.Մ.ասիւններ, հաւատարմով Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութեան՝ մեծ թափով աշխատանքի լծուեցան եւ կրցան պահպանել այս մասնաճիւղը, որուն խօսուն փաստը այսօրուան բազմամարդ այս ձեռնարկն է, յատկապէս քոյր-մասնաճիւղերու մասնակցութեամբ», շեշտեց եղբ. Մանուկեան եւ ուրախութիւն յայտնեց անոր համար, որ «Արցախ» ոչ միայն կարողացած էր կանգուն մնալ, այլեւ համագործակցելով իր քոյր-մասնաճիւղերուն հետ՝ կարողացած էր շահիլ անոնց համակրանքը:

Ապա ան հրաւիրեց ներկաները միասնական կենաց մը խմելու «Արցախ» մասնաճիւղի 15-ամեակին առիթով: Այնուհետեւ, ան Շրջանային Վարչութեան անունով շնորհաւորական յուշատախտակ մը յանձնեց մասնաճիւղի ատենապետ եղբ. Էյպ Գասամանեանի, առ ի գնահատանք մասնաճիւղի 15 տարիներու բեղուն գործունէութեան եւ անդամ-անդամուհիներու անխոնջ եւ անսակարկ նուիրումին:

Գնահատագիրի ստանձնումէն ետք, եղբ. Գասամանեան շնորհակալութիւն յայտնեց Շրջանային Վարչութեան,



Փիէր Մանուկեան յուշատախտակը յանձնէ Էյպ Գասամանեանի:

ներկաներուն, ձեռնարկի կազմակերպիչ յանձնախումբին եւ մանաւանդ շրջանի քոյր-կազմակերպութիւններուն, որոնց զօրակցութեամբ եւ համագործակցութեամբ ոչ միայն կանգուն կը մնայ Հ.Մ.Ը.Մ.ի «Արցախ» մասնաճիւղը, այլ նաեւ կը հզօրանայ Լաս Վեկասի հայկական գաղութը: Ան կոչ ուղղեց ներկաներուն վստահելու իրենց զաւակները Հ.Մ.Ը.Մ.ին, որ անկասկած մաքուր միջավայր եւ հայեցի դաստիարակութիւն կ'ապահովէ անոնց:

Պաշտօնական յայտագիրի աւարտին, երեկոն խանդավառեցին սիրուած երգիչ Անթուան Պէգճեան եւ «Քնար» նուագախումբը: Հրամցուած հայկական եւ միջազգային երգերով ու մանաւանդ պարեղանակներով առաւել խանդավառ դարձաւ արդէն իսկ ուրախ մթնոլորտը, որ շարունակուեցաւ մինչեւ ուշ գիշեր: Յատկապէս տպաւորիչ էր երգիչին հրամցուած ազգային-յեղափոխական երգերու փունջը, որ համախմբեց ներկայ երիտասարդութիւնը եւ մեծապէս ոգեւորեց զանոնք:

Ստեղծուած ուրախ մթնոլորտէն քաջալերուած՝ տեղի ունեցան սրտաբուխ նուիրատուութիւններ:

Վաղ առաւօտեան, ձեռնարկի մասնակիցները գոհունակութեամբ մեկնեցան տուն, Հ.Մ.Ը.Մ.ի «Արցախ» մասնաճիւղին զօրակցելու հաստատակամութեամբ:



Մասնաճիւղին պատուոյ կնքհայրերը՝ փողկապ ստանալէ ետք:

ԽՕՍՔ ՑԱՒԱԿՑՈՒԹԵԱՆ

Ս. Սկրտիչեան
ԼՈՍ ԱՆՃԵԼՍ

Յարութիւն Գոյումճեան մարդը երբ չկայ այլեւս, երբ անոր մարմինը յանձնած ենք յաւիտեանական հողին, թոյլ տուէք ցաւակցութեան երկու խօսք ըսելու անոր յիշատակին:

Եղբ. Յարութիւն Գոյումճեան ծնած է 1930-ին, նուիրական Հալէպ քաղաքը: Այն հիւրասէր, մարդասէր քաղաքը, ուր թուրքէն հալածուած, ջարդուած մեր պապերը կայք դրին, սուրբ ու սրբազան ընտանիք կազմեցին՝ իրենց նահատակ պապերուն յիշատակը յաւերժացնելու համար: Բայց, կեանքին գաղտնիքը մարդ չի գիտեր: Այլապէս այդ ի՞նչ ցաւ էր, այդ ի՞նչ զուլում էր, որ եկաւ Գոյումճեան ընտանիքին գլխուն: Հայր ու մայր մէկ օրուան տարբերութեամբ մահացան ու գացին: Ծանր էր: Բայց այդ է օրէնքը բնութեան:

Բայց այսու առաւելաբար պիտի անդրադառնամ «Գոյում»-ին Հ.Մ.Ը.Մ.ական կեանքին, անոր նուիրումին:

Եղբ. Յարութիւն Գոյումճեան փոքր տարիքին կ'անդամակցի Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն: Ան կ'ըլլայ գայլիկ, ապա սկաուտ, ու կը մեծնայ Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին մէջ,

կ'առնէ անոր դաստիարակութիւնը՝ յարգանքի, համեստութեան նուիրումի ոգին, ազգին ու հայրենիքին ծառայելու մաքրամաքուր սէրը: Նաեւ կ'ըլլայ ընտանեկան, ազգային, թէ ընկերական պարտականութեան գիտակից մարդ:

Ուրախանալի է, որ այսօր «Գոյում»-ին զաւակները կ'ընթանան իրենց հօրը ճամբով:

Բնատրութեամբ համեստ, մարդամօտ ու անկեղծ այս երիտասարդը ժամանակին առընթեր կը սիրաշահէր շատերուն համակրանքը, սիրտն ու սէրը: Այդ է կեանքին գեղեցկութիւնը նաեւ:

«Գոյում» ֆութպոլ խաղաց սկաուտական խումբէն եւ յետոյ անցաւ Հ.Մ.Ը.Մ.ի առաջին խումբ, ուր խաղաց բաւական երկար ժամանակ:

Ֆութպոլը սիրուած խաղ մըն էր, լաւ ֆութպոլ խաղացողը կը գնահատուէր: Հալէպի մէջ ֆութպոլը սերունդ կը դաստիարակէր, հայուն մէջ հայը կը պատրաստէր, թէւ վճարովի խաղալու հարցը դեռ չկար:


Այսօր ո՞ր էն, ո՞ր Հ.Մ.Ը.Մ.ի այն տղաքը, որունք յաղթանակի ծառաւ հայութեան համար եղան երգ, եղան հազար-հազար ազգային, եղան կանչ ու ծափ:

«Գոյում», լա՛օ, ի՞նչ ես պառկեր: Ե՛լ, ե՛լ երթանք դաշտ, Հ.Մ.Ը.Մ.ական տղաքը քեզ կը սպասեն: Ե՛լ:

ԵՂԲ. ՄԿԷՆ ԱՎ ՅԱՆՁՆԵՑԻՆՔ ՍԵՒ ՀՈՂԻՆ

Արմէն Քեօշկերեան
ՀԱԼԷՊ

Հալէպի արիւնալի դէպքերուն նախօրեակին, աշխատանքային սովորական օր մը, կէսօրուան մօտ, կը հանդիպիմ եղբ. Անդրանիկ Սիւլիւքճեանի գործատեղը, որ կրէց Հ.Մ.Ը.Մ.ականներու ժամադրափայրն է տարուան բոլոր եղանակներուն: Հոն կը տեսնեմ եղբ. Մկրտիչը, բոլորին ծանօթ՝ Մկէն: Եղբ. Սիւլիւքճեանի հետ ան կը գրուէր նոր Գիւղի պարտէզին մասին: Կը բարեւեմ ու կը համբուրեմ: Եղբ. Անդրանիկը կը հարցնէ համբուրելուս պատճառը: Կ'ըսեմ՝ «Երկարատենէ չեմ տեսած գինք»: «Ե՞րբ պիտի տեսնենք իր մասին գրուածները», հարց կու տայ ան: «Դեռ շատ կանուխ է, տակաւին երիտասարդ է, օրը կը հասնի՝ կը գրեմ», կը պատաս-



խանեմ:

Դժբախտաբար, օրը շատ արագ հասաւ եւ եղբ. Մկրտիչին մահուան լուրը խոր սուգի մատնեց իր հարազատներն ու Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ ընտանիքը:

Եղբ. Մկրտիչ Միրզոյեան ծնած էր Գամիշլի, 1938-ին: Նախնական ուսումը ան ստացած է Ազգ. Եփրատ վարժարանէն: Ութ տարեկանին արդէն գայլիկ էր Հ.Մ.Ը.Մ.ի: Եղած է գործօն անդամ Հ.Յ.Դաշնակցութեան, որպէս «անկեղծ գինուոր»: Գամիշլի ապրած շրջանին ստանձնած է գայլիկներու Աքեյլայի պաշտօնը: Իրեն վստահուած պարտականութիւնները կատարած է լիովին:

1959-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Միջին Արեւելքի մասնաճիւղերու դպրոց-բանակումին (Զմմառ, Լիբանան), որպէս աստիճանաւորներ, Գամիշլիէն իրենց մասնակցութիւնը կը բերեն եղբայրներ Մկրտիչ Միրզոյեան եւ Վարդգէս Սիմոնեան:

Եղբ. Մկրտիչ եղած է նաեւ համազգայնական եւ տիգրանակերտցիներու հայրենակցական միութեան վարչութեան անդամ: Բոլորին վկայութեամբ, ան հանդիսացած է հաւատաւոր ու նախանձախնդիր միութենական:

Եղբ. Մկրտիչ կը պատկանէր այն սերունդին, որ Գամիշլիի մէջ կազմաւորուեցաւ լուսահոգի եղբ. Յակոբ Մկրտիչեանի շունչով: Տարիներ շարունակ ան շատ բան տուաւ իր սրտէն ու հոգիէն, ըլլա՛յ բարոյական, ըլլա՛յ նիւթական: Ինչ որ ունէր ան կտակեց իր պաշտելի կուսակցութեան:

Իր խոնարհ ու համեստ նկարա-



գիրով, եղբ. Մկրտիչ ամէն տեղ եղաւ փնտռուած ու յարգուած ներկայութիւն: 25 տարի ան անսակարկ ծառայութիւն մատուցեց «Արամ Մանուկեան» կեդրոնին, որպէս ինամակալ: Գամիշլիի եւ Հալէպի մէջ իր ունեցած 60 տարուան ծառայութեամբ, ան եղաւ փորձառութեամբ լեցուն միութենական մը:

Այո՛, ան բաժնուեցաւ մեզմէ, սակայն մենք միշտ պիտի յիշենք զինք: Յիշատակը անջնջելի պիտի մնայ:

Թո՛ղ հողդ թեթեւ գայ վրադ, սիրելի Մկէ:

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ ԵՂԲ. ՄԿՐՏԻՉ ՄԻՐԶՈՅԵԱՆԻ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

Վարդգէս Սիմոնեան ԳԱՄԻՇԼԻ

1 959-ի յեկտեմբերեան օր մը, Հ.Մ.Ը.Մ-ի Գամիշլիի ակումբին մէջ տեղի ունեցաւ մասնաճիւղի Սկաուտ-Խորհուրդին ծնողական հաւաքոյթը,

Տեղւոյն Հ.Մ.Ը.Մ-ի Սկաուտական Խորհուրդին կազմակերպած Ծնողական հաւաքոյթը տեղի ունեցաւ 1959 Դեկտեմբեր 2-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Հ.Մ.Ը.Մ-ի շքեղ սրահին մէջ, ուր նոյնպէս եղաւ ողջերթի երեկոյ մը՝ ի պատիւ եղբ. Մկրտիչ Միրզոյեանին (գայլիկներուն Աքելլան), որ յաջորդ օրը պիտի մեկնէր սուրիական հայրենիքին ծառայելու համար:

Սկաուտական Խորհուրդի ատենապետ եղբ. Մանուէլ Մարքէեան բացուած յայտարարեց երեկոյթը: Ան իր բացման խօսքին մէջ հակիրճ կերպով բացատրեց սկաուտութեան դերը գաղութին մէջ, եւ անոր օգտակարութիւնը հայ իրականութեան մէջ, ապա հրաւիրեց գայլիկներու ընդհանուր պատասխանատու խորհուրդի անդամ եւ Աքելլայ եղբ. Մկրտիչ Միրզոյեանը, որպէսզի սկսի օրուան յայտագրին գործադրութեան: Եղբ. Մկրտիչի հսկողութեան տակ նախ գայլիկները երգեցին Հ.Մ.Ը.Մ-ի քայլերգը, ու իրարու յաջորդեցին գանազան գեղեցիկ անակնկալներ, գանազան ազգերու լեզուով սկաուտական կանչեր, կենդանիներու պարեր, ազգային ու ժողովրդական երգեր ու արտասանութիւններ: Եղբ. Աքելլային վերջին հանդիպումն էր գայլիկներուն հետ. գայլիկները տխուր էին, որովհետեւ իրենցմէ պիտի բաժնուէր իրենց այնքան սիրելի Աքելլան: Եղբ. Մկրտիչ վերջին 3 ամսուան մէջ մեծ խանդավառութիւն ստեղծած էր գայլիկներու շարքերէն

ներս, որոնց թիւը հասած էր 60-ի եւ օրէ օր դիմումները կ'աւելնային: Եղբ. Մկրտիչ Հ.Մ.Ը.Մ-ի Շք. Սկաուտ-Խորհուրդի դպրոց բանակումէն շատ բան սորված էր եւ նոյնպէս շատ բաներ սորվեցուցած:

Ապա, եղբ. Մանուէլը հրաւիրեց օրուան դասախօսը՝ եղբ. Յակոբ Մկրտիչեանը, որպէսզի ծնողներուն բացատրէ օրուան հաւաքոյթին իմաստը: Եղբ. Յակոբ բացատրեց ծնողներուն, թէ այս հսկայ կազմակերպութիւնը պէտք ունի քաջալերանքի հայ տուններէն ներս, որովհետեւ այս հսկայ «բերդը» (ակումբը) մեր երկրորդ տունն է, երբ քաջալերենք այսպիսի գեղեցիկ նպատակի համար սարքուած հաւաքոյթներ կամ ձեռնարկներ, այն ատեն միութեան կամ կազմակերպութեան կապը աւելի կ'ամրանայ, եւ մենք աւելի եռանդով կը լծուինք մեր հայապահպանման նուիրական գործին, ու մեզի կը հետեւին մեզմէ փոքր եղբայրներ, ինչպէս արդէն կ'ըսէ մեր միութեան նշանաբանը. «Բարձրացիր-բարձրացո՛ւր»:

Գասախօսութենէն վերջ եղբ. Աքելլան իր հրաժեշտի խօսքը փոխանցեց Ա. Մանուկեանի «Հէյ ջան Երեւան»ով:

ՄԱՀԱՉԴ

Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը կը գուժէ իր շրջանի վաստակաշատ եղբայրներէն՝

ՎԱՐԴԳԷՍ ԾԱՏՈՒՐԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 24 Սեպտեմբեր 2012-ին:

**Պատրաստեց՝ Շաղիկ Գեորգեան
ՊԵՅՐՈՒԹ**

Տ ազարաւոր տարիներ անցան այն օրէն, երբ մեր նախահայրերը հնարեցին իրենց մտածումները արձանագրելու յարմարագոյն ձեւը:

Չորս հազար տարի առաջ եգիպտացիք սկսան պապիրոսի գործածութեան, մինչ չինացիք հնամաշ հազուստներէն սկսած էին պատրաստել թուղթը:

Տարիներ անցան, մարդկային հանճարեղ ուղեղը չդադրեցաւ գործելէ եւ 1850-ական թուականներուն Ֆրետերիք Բելլէր անունով գերմանացի մը գտաւ թուղթ պատրաստելու նոր մեթոտ մը, ձեւ մը, որ մինչեւ հիմա կը մնայ անփոփոխ. ան ծառի խիւսէն պատրաստեց թուղթը:



Ճափոնցի գիտնականներ թուղթի տազնապը կանխելու համար սկսած են քարիւղէն թուղթ պատրաստել, հակառակ որ քարիւղէն պատրաստուած թուղթին ծախար կոճղէն պատրաստուածին քառապատիկն է:



ՅԵԾԻԿԸ

Շ առ տարիներ առաջ, հեծիկները միակ փոխադրամիջոցն էին մարդոց համար: Տասնամեակներ պէտք եղան մինչեւ որ անոնք դարձան դիւրին շարժող, արագ եւ այսօրւան տեսքով փոխադրամիջոցներ:


1808 թուականին, Փարիզի մէջ յայտնուեցաւ հեծիկի տեսակ մը, որ դեկ չունէր: Հեծելանաւորդը հերթով կը շարժէր ոտքերը, գետին կը քսէր ոտքը, որու շնորհիւ ան տեղէ տեղ կը փոխադրուէր:

1817-ին, Քարլ

Ֆոն Տրէր անունով գերմանացի մը հեծիկին աւելցուց դեկը, ապա աւելցան ոտնակները: Մարդիկ փորձեցին աւելցնել անոր արագութիւնը: Առջեւի անիւը աւելի մեծ պատրաստեցին, իսկ ետեւինը մնաց փոքր: Այս բոլորէն ետք հեծիկը սկսաւ տարածուիլ աշխարհի տարածքին:

Այսօր կան հեծիկի բազմաթիւ տեսակներ ու չափեր, տարբեր արագութիւն ունեցող եւ գոյներու այլազանութեամբ մանուկներու թէ մեծերու հեծիկներ: Հեծիկ քշելը կը նկատուի նաեւ մարզաձեւ: Աշխարհի տարածքին կան հեծիկի մրցումի բազմաթիւ մրցաշարքեր: Եթէ դուն փոքր ես կրնաս վարել եռանիւ հեծիկ, որ անվտանգ է եւ շատ զուարճալի:






Առիւծ-
ները
կատ-
ուազգի գիշա-
տիչներ են:
Անոնք կ'ապրին
խում բերով,
որոնք կը կոչ-
ւին փրայտներ:
Փրայտը բաղ-
կացած է մէկ
արուէ, քանի մը
էգէ եւ կորիւն-
ներէ: Էգերը



ԱՌԻՇՆԵՐԸ



կը զբաղին որսորդութեամբ, իսկ արուն՝ տուեալ շրջանի պաշտպանութեամբ:

Առիւծը կը կշռէ 200-250 քիլոկրամ: Արուն ունի շքեղ բաշ եւ կ'իշխէ իր շրջապատի էգերուն: Որպէսզի օտարները չհամարձակին մտնել իր շրջանը, ան կ'արձակէ սարսափելի մռնչիւն, որ կը տարածուի ամբողջ տափաստանին մէջ:

Արու առիւծը շատ ծոյլ է, ան քսան ժամ կը հանգստանայ: Կորիւնները առաջին երեք ամիսները կ'անցընեն իրենց մայրիկին հետ, ընտանիքի միւս անդամներէն առանձին: Երբ արու ձագերը կը դառնան երեք տարեկան, առաջնորդը գանոնք դուրս կը հանէ հօտէն, որպէսզի սորվին այլեւս առանձին ապրիլ եւ փորձել դառնալ մէկ այլ փրայտի առաջնորդ:



ՀԱՆՆԵԼՈՒԿ

(Ներսէս Ծնոր-
հայրի հանելուկներէն)
Ո՞վ է, ի՞նչ է:
Գիշերով ան լոյս

կու տայ,
կ'ապրի ճիշդ մէկ ամիս:
Նախ կը կխուռի, կը նորանայ,
Կլոր դէմքով աշխարհ կու գայ:
(Պատասխանը՝ յաջորդիւ: Նախորդ թիւին պատասխանն էր կատու):

ԻՆՉՊԵՍ ՍԵՂԱՆԷՆ ԵՒՇԴ ՁԵՒՈՎ ՕԳՏՈՒԻԼ

Բոլորս ալ կը սիրենք համեղ ուտելիքներ ուտել, բայց ուտելէ առաջ նախ պէտք է գիտնալ սեղանէն ճիշդ ձեւով օգտուելու կանոնները:



Ամէնէն առաջ պէտք է լուացուիլ եւ կարգի բերել հագուստները: Սեղանին քով պէտք է նստիլ ուղիղ-չձուիլ, փորձել ձեռքերը սեղանին չյնենլ: Չշատախօսել ուտելու ատեն, յատկապէս չխօսիլ՝ երբ բերանը ուտելիք կայ: Սեղանին վրայ դրուած ճաշի ամաններէն երբեք պէտք չէ օգտուիլ սեփական պատառաքաղով: Անոր համար առանձին սպասք կայ: Ամէն ինչ կարելի է վերցնել առանց ձեռքերը աղտոտելու:

Ձեռքով կարելի է վերցնել հացը, պտուղը եւ այլն: Հրամցուած ճաշի ամանէն եթէ որեւէ բան պիտի վերցնէք պէտք չէ անպայման լաւագոյնը վերցնէք, այլ՝ պէտք է վերցնէք այն ինչ որ ծայրը դրուած է: Չմոռնալ նաեւ, որ ամէն ինչ պէտք չէ վերցնել, պէտք է ձգել նաեւ ուրիշներու:

Անքաղաքավարութիւն է պնակին մէջ ուտելիք ձգելը:



Տարբեր Յայտացրով



Էլի Յուլիշեան

ՍՈՒՏՈՔՈՒ

5						2		1
		8	5	3				
3					2		5	
		1		2		8		
7	9		1		8		6	4
		5		9		1		
	7		8					3
				7	3	4		
9		3						6

Յորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գծացանցը բաղկացած է իւրաքանչիւրը 9 քառակուսի հաշուող 9 բաժիններէ (3x3): Բացառումի սկզբունքին կիրարկումով իւրաքանչիւր քառակուսիի մէջ թուանշան մը զետեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ 9 քառակուսիներու իւրաքանչիւր բաժին ունենայ 1-9 թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով, ոչ մէկ պարագայի արտօնուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Սկսելու համար, կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ քառակուսիներուն մէջ զետեղուած են:

Նախորդին լուծումը

4	2	9	5	3	7	8	1	6
5	3	7	1	6	8	4	9	2
6	1	8	2	9	4	3	7	5
1	4	6	8	2	9	5	3	7
8	7	5	6	1	3	9	2	4
3	9	2	4	7	5	1	6	8
9	8	3	7	4	6	2	5	1
2	6	4	3	5	1	7	8	9
7	5	1	9	8	2	6	4	3

Պատասխանը՝ յաջորդիւ

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

1. Եւրոպական լեզու մը - Ածականակերտ մասնիկ:
2. Օդ - Կրկնոց, վերարկու:
3. Երկրորդական դիրքի վրայ - Շին Ֆէյնի երբեմնի գինուորական թեւը:
4. Տարիք - Նախանձիր - Ամայի:
5. Ճատրակի հայրենի վարպետ:
6. Ամորձիքի պարկ - Շարունակ:
7. Ապացոյց, հիմնաւորում - Կողմ:
8. Չայնանիշ - Տապալի - Քառաթեւ:
9. Դաւաճանէ՛ - Լարաւոր նուագարան:
10. Ռուսական դրամ - Նուագածու:
11. Ռուս թենիսփուժըն:
12. Յարգական տիտղոս:
13. Ժամանեց - Յետոյք, նստատեղի:
14. Չայնանիշ - Ունայն, փուճ:
15. Վերակենդանացած:
16. Ետին դարձած՝ սերպ թենիսմէն:
17. Տարուան բաժանումներէն - Հ.Մ.Ը.Մ.ական նախկին մամուլէն - Ընկրկում:
18. Տարիքով մեծ - Յետոյ - Մորթային բիծ:
19. Ողբա՛ - Էական բայէն - Դաշտ - Գրաբար ո՞ւր:
20. Դարձեալ - Եկեղեցական պատուիրակ - Մակոյկ:

ՈՒՂՂԱՀԱՅԵԱՅ

1. Խեղանդամ - Ափրիկեան երկիր:
2. Իսլամ կրօնաւոր մը - Նշանակութիւն:
3. Շան ուտելիք - Ճափոնական օդանաւային ընկերութիւն մը - Բաբանով արձակելու քար:
4. Համահայկական Խաղերու Համաշխարհային Կոմիտէի Հ.Մ.Ը.Մ.ական փոխ նախագահը:
5. Մեծարանք - Հարաւային Ամերիկայի ոստաններէն:
6. Հաստատական պատասխան - Ծովային երկպատեան կենդանի - «Գեղեցիկ» կոչուած նահապետը - Փորթուգալեան նախկին գաղթավայր՝ Հնդկաստանի մէջ - Շաղկապ:
7. Հռոմ քաղաքը այրել տուած կայսրը - Ածականակերտ մասնիկ - Տարուան եղանակներէն - Գեղամ Սարեանի երկերէն:
8. Նախապտուղ - Ժխտական մասնիկ - Դեռ չհրատարակուած:
9. Գզրոց - Անձին այծ - Անտերունչ - Եղանակաւորիչ մակբայ:
10. Եւրոպական ընդլայտակեայ գինեալ կազմակերպութիւն մը - Յարաբերական դերանուն - Ծովեզերեայ քարաժայռ - Ասիական երկիր - Ազամանդ:
11. Ճափոնական ինքնաշարժներու վաճառանիշ մը - Չառիվար գետեզերք - Փոր:
12. Ճնշիչ - Խակ - Շնորհակալ - Տառի մը անունը:
13. Յուցական դերանուն - Արական օտար անուն - Ամէնէն առաջ:
14. Բուսական կարմիր ներկ - Այբուբենէն - «Ակնոցաւոր» օձ:
15. Խոպան վայրեր աճող բոյս - Անիծոտ:

1																				
2																				
3																				
4																				
5																				
6																				
7																				
8																				
9																				
10																				
11																				
12																				
13																				
14																				
15																				
16																				
17																				
18																				
19																				
20																				



ԹԻՒ 202 ԽԱՉՔԱՌԻՆ ԼՈՒՐՈՒՄԸ

1																				
2																				
3																				
4																				
5																				
6																				
7																				
8																				
9																				
10																				
11																				
12																				
13																				
14																				
15																				
16																				
17																				
18																				
19																				
20																				



Հ.Մ.Ը.Մ.
ԵՐՈՒՍԱԳՂԷՍ

